Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ստրաբոնի
1903 թ.

891.99
Ռ-66

1903

10 NOV 2011

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

891.99-3
Շ-66 ա

ԱՐՏԻՍՏԸ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Խ.Հ. Публичная Библиотека
7/XI-1922
Երևան, Մասնաճյուղ
Ս. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան Մովսես Վարդանեանցի
1903

15.07.2013 48224

Доз. Цензурою. 4 Ноября 1903 г. Тифлисъ.

ՀՌԻՓՍԻՄԵԱՆ

ԱՐՑԻՍՑԸ

Հինգ ամիս էր ընդամենը Օդեսայումն էի, չորրորդ անգամ փոխեցի սենեակս։ Քաջը ի շատէ մեծ քաղաքում ընակուող մենակեցի համար մի առանձին հաճոյք է ստէպ-ստէպ կացարան փոխելը։ Անցնելով մի թաղից միւսը, կարծում ես մի երկրից միւսն անցար։ Նոր հարևանութիւն, նոր միջավայր, երբեմն այլ կենցաղով ու ոգով։

Այս անգամ պիտի ընակուէի քաղաքի աղմկալի փողոցներից մինում, հինգյարկանի մի տան երրորդ յարկում։ Տանտիրուհիս իտալուհի էր, գէր, առողջ, ամրակազմ մի այրի մօտ յիսուն տարեկան։ Նրա ամուսինն եղել էր իտալական օպերայի յուշարար, շատ վաղուց հայրենիքից տեղափոխուած Ռուսաստան։ Մեռնելով, կնոջ ու միակ դստեր համար թողել էր իբրև ժառանգութիւն հին նօտաների մի մեծ կապոց և իտալացի արտիստների ծանօթութիւնը։ Այրին, ապրելու ուրիշ միջոց չունե-

նալով, պարապում էր սենեակները վարձու տալով։

Հէնց առաջին օրն ես ծանօթացայ հարևաններիս հետ։ Այդ ինձ համար նոր և բաւական հետաքրքրական շրջան էր։ Նա բաղկացած էր մեծ մասամբ իտալացիներից։ Կար և՛ մի ռուս ուսանող ու մի հրէուհի ատամնաբոյժ, բաւական գեղեցիկ, թէև ոչ այնքան էլ թարմ։

Կենտրոնը կազմում էր տանտիրուհու դուստրը՝ շիկահեր, փղոսկրի պէս փայլուն, մաքուր ատամներով և գեղեցիկ աչքերով քսան տարեկան Լուիզան։ Նա երգում էր, ունէր զօրեղ ու անոյշ ձայն, պատրաստւում էր բեմին նուիրուելու։ Գիտէր նուագել դաշնամուր, երաժշտութեան դասեր էր տալիս, փող ժողովում, որ գնայ Իտալիա ձայնը մշակելու։

Առաջին օրն անծանօթ շրջանում զգացի սովորական անյարմարութիւն, երկրորդ օրն ընտելացայ, իսկ մի շաբաթ անցած՝ բաւական բարեկամացայ բոլորի հետ։ Մենք ճաշում էինք մի և նոյն սենեակում, միաժամանակ, մի և նոյն սեղանի քով։ Երկու ժամից սկսած մինչև երեկոյեան չորս-հինգ ժամը ծիծաղ, երգ, նուագում, պար ու սրախօսութիւններ խառնւում էին միմեանց և ջերմացնում տարբեր ազգերի ու դաւանութիւնների պատկանող մարդկանց բարեկամական մթնոլորտը։

Մի օր ճաշից յետոյ Լուիզան նստեց դաշնամուրի քով և սկսեց նուագել ինչ-որ վայրս։ Բասս-կոնտրաս Չելլինին գրկեց կոնտրայտս Լուկրեցիա Կաֆարելլիին ու սկսեց պարել։ Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ, որովհետև իրաւ որ այդ մի զուարճալի զոյգ էր. Չելլինին խիստ նիհար էր և շատ բարձրահասակ, Լուկրեցիա Կաֆարելլին, ընդհակառակը, խիստ գէր էր և կարճահասակ։ Լուիզան նուագելով հանդերձ գեղեցիկ գլուխը ձգել էր յետ և անդուսպ քրքջում էր, լեցնելով սենեակը իւր անուշ ձայնի հիւթալի հնչիւններով։

Զուարճութեան տաք միջոցին դռների մէջ նկարուեց ինձ համար մի անծանօթ կերպարանք։ Ոչ ոք առաջին պահ չնկատեց նրան, բացի ինձանից, որ նստած էի դռների մօտ։ Անծանօթը հէնց առաջին վայրկենից գրաւեց ուշադրութիւնս։ Ես դիտեցի նրան։ Մօտ 16—17 տարեկան մի պատանի էր նիհար, գունատ դէմքով, կուրծքը փոքր ինչ ներս ընկած։ Հագած էր մուգ-կապտագոյն գօտևոր կարճ բաճկոն, որի կուրծքը զարդարուած էր ասրեայ խաչաձև ծոպերով, և նոյն գոյնի նեղ վարտիք։ Գեռին բռնած էր մի կակուղ կանաչագոյն գլխարկ փետուրով զարդարուած, նման այն գլխարկներին, որ դնում են թափառաշրջիկ յոյն անդրիավաճառները կամ իտալացի երաժիշտները։ Նրա դէմքի

գծերը կանոնաւոր էին ու նուրբ, աչքերն ունէին ինչ-որ մելամաղձիկ արտայայտութիւն։ Դա այն երջանիկ զէմքերից էր, որոնք հէնց առաջին հայեացքով մարդու սրտում շարժում են համակրութեան զգացում։

—Բոն ջուրնո,—ասաց նա, գլուխ տալով։

—Օհո՛, արտի՛սաը,—գոչեց ամենքից առաջ բարիտոն Կավալլարօն, որ մի բարեսիրտ մարդ էր մօտ երեսուն ու հինգ տարեկան։

—Արտի՛սաը, արտի՛սաը, — կրկնեցին միւսները։

Նոյն վայրկենին պարը, նուագում, ծիծաղ ընդհատուեցին, և բոլորի հայեացքները դարձան դէպի պատանին։

—Ո՞րտեղ էիր, այսքան ժամանակ չէիր երևում,—հարցրեց Կավալլարօն։

—Սպասեցէք, նա տխուր է,—գոչեց Լուիզան և մօտեցաւ պատանուն.—էլի ինչ է պատահել, ինչու՞ ներս չես մտնում։

—Ո՞րտեղ է սինեօրա Ստեֆանիան,—հարցրեց պատանին։

Նրա ձայնը յուզուած էր, դողում էր։ Կար այդ ձայնի մէջ մի սրտաշարժ շեշտ, որ արտայայտում էր հեզութեան հետ և թախիծ։

—Ա՜հա, հասկացայ,—ասաց Լուիզան,—էլի մայրդ, երևի, հիւանդ է. Խե՜ղճ պատանի, դու սլանում ես երկինք, նա կպած է երկրին...

—Սինեօրինա Լուիզա, ես ձեզ խնդրում եմ ինձ չխղճալ,—գոչեց պատանին վիրաւորուած,—սինեօրա Ստեֆանիան այստեղ չէ։

—Մայրս խոհանոցումն է։

Պատանին գլուխ տուեց շնորհալի ձևով ու հեռացաւ։

—Նա չափազանց տխուր էր,—ասաց Կավալլարօն,—անշուշտ մայրն այս անգամ ծանր հիւանդ է։

—Չեմ կարծում,—նկատեց Լուիզան,—այդ կինը միշտ հիւանդանում է որդուն տանջելու համար։ Խե՜ղճ պատանի...

—Խե՜ղճ,—կրկնեց ռուս ուսանողը կծու հեգնութեամբ,—բայց նա չի ուզում, որ դուք նրան խղճաք, սինեօրինա Լուիզա։ Տեսա՞ք, ինչպէս վիրաւորուեց։

—Նա հպարտ է ինչպէս սպանական գրանդ,—ասաց Կավալլարօն, իւր բարի աչքերը թանձր ունքերի տակից դարձնելով դէպի ինձ,—և հպարտութիւնը սազում է նրա հեզութեանը։ Սինեօր, նրա կերպարանքն ինձ միշտ յիշեցնում է իմ եղբօրը։ Տաղանդաւոր ջութակահար էր, մեռաւ քսան տարեկան հասակում թեերիս վրայ։

—Դուք ճանաչում էք Լեոնին,—դիմեց ինձ օրիորդ Ռաիսան՝ հրէուհի տատմնարոյժը։

—Ո՞չ։ Երևակայեցէք, հարևաններ, պարոնը մեր արտիստին չի ճանաչում։

—Օհ, այդ աններելի է,—գոչեցին Լուիզան ու Լուկրեցիա Կաֆարելլին։

—Իմ կարծիքով,—ասաց Կավալլարոն,—ով գեղարուեստասէր է, իրաւունք չունի Լեոնին չճանաչելու։ Նա իսկական արտիստ է, այո, հոգով, սրտով, արիւնով, ամբողջ էութեամբ արտիստ։

Իմ հեռաքրքրութիւնը բոլորովին գրգռուեց։ Ո՞վ է, վերջապէս, այդ մանուկը, որ այդքան գրաւել է հարեաններիս համակրանքը։

—Եթէ կամենում էք, իսկոյն կըծանօթանաք,—ասաց Լուիզան. — արժէ այցելել նրան իւր ապարանքում։ Գիտէ՞ք ինչ,—դարձաւ նա ընդհանուրին,—վատ չի լինիլ, եթէ խմբովին գնանք մեր արտիստի հիւանդ մօրը տեսնելու։ Այո, վատ չի լինիլ... Ես գնում եմ, ով ուզում է, թող հետեւէ ինձ։

Այս ասելով, նա անմիջապէս դիմեց դէպի դռները։ Բացի ուսանողից և երկրորդական բարիտոն Բօրելլիից, բոլորս հետեւեցինք նրան, նոյն իսկ հասատամարմին Լուկրեցիա Կաֆարելլին։

Արտիստը բնակւում էր նոյն տան վերին յարկում։ Լուիզան մեզ առաջնորդեց դէպի գլխաւոր սանդուղը, բարձրացանք չորրորդ յարկը։ Այնտեղից նեղ, կեղտոտ, փայտեայ սանդղով հասանք հինգերորդ յարկը, մտանք մի մթին անցք։ Անմիջապէս խփեց մեր քթին

ճարպի մէջ տապակուող մսի անախորժ հոտը։

Լուիզան կանգ առաւ մէկթեանի մի ցածը դռան առջև։

—Սինեօր Զելլինի,—ասաց նա,—ձեզ համար պիտի առաստաղը մի փոտ բարձրացնել։

—Իսկ սինեօրինա Կաֆարելլիի համար դռները պիտի երկու փոտ լայնացնել,—հեգնեց Զելլինին կօնտրայլտօի մարմնի հաստութիւնը, գրկելով իւր երկայն թեւով նրա իրանը։

Մենք մտանք մի սենեակ, որ մի փոքր մեծ էր, քան մի մեծ հաւաբուն։ Այնտեղ, մութ անկիւնում, պատի տակ երևում էր ինչ-որ բան, նման անկողնակալի թէ թախտի՝ չգիտեմ. սինեօրա Ստեֆանիայի յաղթանդամ մարմինը թագցնում էր նրան իմ աչքից։ Մի քայլ առաջ գնալով, տեսայ հնամաշ վերմակի տակ պառկած մի կնոջ դէմք։ Նրա ճակատը կապած էր սև թաշկինակով, աչքերը յառած առաստաղին։ Նա անքանքում էր ու ծանր հառաչում։ Նրա ոտների կողմում կանգնած էր «արտիստը»։ Ըստ երևոյթին, նրա միտքը կըլանուած էր կամ մօր հիւանդութեամբ կամ մի ուրիշ հոգսով, որովհետև մեր երևալը աննկատելի մնաց նրա համար։

—Դէ լաւ, քիչ տնքտնքա,—ասում էր սինեօրա Ստեֆանիան հիւանդին,—խօմ չես մեռնում։ Սովորական հիւանդութիւնդ է, էլի

Բագուի Հայոց Հոգևոր Դպրոց

վաղը կանցնի։ Բա-բա-բա, աՀա, մօտդ ինչ պատուաւոր հիւրեր են եկել։ Համարեա իմ բոլոր կալալէրներն ու դամերը։ Տղայ,—դարձաւ նա Լեոնին,—երևի, այդ դու ես անհանգստացրել մարդկանց։

Պատանին նայեց մեզ, չափազանց շփոթուեց և շտապեց սենեակի ընդամենը մի դոյզ ջարդուած աթոռներն առաջարկել եօթ հիւրերից չգիտէը որ մէկին։

—Պարոնը բժիշկ է,—հարցրեց հիւանդը, երբ տեսաւ ինձ։

—Բժիշկ չէ,—պատասխանեց սինեօրա Ստեփանիան,—բայց, երևի, ցաւդ բժշկից լաւ կըհասկանայ։ Քո հայրենակիցներից է...

—Հմ,—գոչեց հիւանդը զարմանալով թէ ուրախանալով չգիտեմ և, գլուխը դանդաղ բարձրացնելով, նստեց անկողնում։

—Հմ,—կրկնեցի ես զարմացած, որովհետև ինչ ազգի ասես սպասում էի այդ միջավայրում, բացի հայից։

—Այո,—ասաց օրիորդ Ռախան,—արտիսաը ձեր հայրենակիցն է. զարմանալի է, որ չիմացաք հէնց առաջին տեսնելուց։

—Ո՞րտեղացի էք,—հարցրեց հիւանդը,—խօմ Բեսարաբիայից չէք։ Ո՞չ։ Օ՜, այդ շատ լաւ է, շատ լաւ։ Օ՜ֆ-օֆ-օֆ, Բեսարաբիայի հայերը Աստուած չունին, գաղաններ են, չեն

ուզում ցաւս հասկանալ։ Տէր Աստուած, ոչ ոք ցաւս չի հասկանում, ոչ ոք...

—Էլի մի սկսիր հին երգդ,—գոչեց սինեօրա Ստեփանիան,—բաւական է։

—Ո՛չ, Ստեփանիա, չեմ կարող լռել, սիրտս այրւում է։ Դու էլ մայր ես, բայց դաւակդ տղայ չէ։ Օ՜հ, երանի իմն էլ աղջիկ լինէր։ Զգիտես, ինչ է անում նա։ Հօր նման տանջում է ինձ։ Պարոն,—դարձաւ ինձ,—այդ փչացածն իմ միակ տղան է, հասկանում էք, միակ, ուրիշ դաւակ չունիմ։ Աստուած սիրէք, խելքի բերէք նրան։ Նա հօր ճանապարհով է գնում...

—Սովորական գանգատներ են,—շշնջաց ականջիս Լուիզան,—ուշադրութիւն մի դարձնէք։

Ես նայեցի Լեոնին։ Ամաչելուց նա երեսը դարձրել էր պատին, մեզ չէր նայում։

Լուիզան մօտեցաւ նրան, բռնեց ձեռներից, երեսը դարձրեց իւր կողմը, ուղիղ նայեց աչքերին բարեկամական—ո՜չ, աւելի—սիրող քրոջ քնքոյշ հայեացքով։ Ինձ թուաց, որ այդ հայեացքը թափանցեց մինչև Լեոնի հոգու խորքը։ Եւ մեզ հոգու խորքը չէր թափանցիլ այն։ Լեոնը զուարթացաւ և երախտագիտութեան զգացումով լեցուն աչքերով նայեց թատրոնի երեսին։

—Եթէ օրինաւոր որդի լինէր,—շարու-

նակեց հիւանդը,—ձեզ նման պատուաւոր հիւրերին այսօր այս խողարնում կընդունէր։ Տեսնում էք, աթոռներ էլ չունինք։ Անամօթ, ինչ ես ցցուել փայտի պէս։ Չեմ տեսնում հիւրերիս։

Լեոնը կրկին անգամ սենեակի մի զոյգ աթոռներն առաջարկեց մեզ։ Նստել անկարելի էր. այդ փոքրիկ սենեակում եօթ-ութ հոգի կանգնել միայն կարող էին։ Լուկրեցիա Կաֆարելլին երկար չդիմացաւ օդի սակաւութեանը, դուրս գնաց։ Չելլինին հետևեց նրան, ասելով թէ «արտիստի» մայրը մեռնելու ախորժակ չունի դեռ, կարիք չկար անհանգստանալու։

Նրանց դուրս գնալուց յետոյ սենեակն այնչափ գոնէ ազատուեց, որ ես կարող էի դիտել շուրջս։ Այն, ինչ որ տեսայ, ինձ հաճելի զարմացում պատճառեց։ Մի անկիւնում կախուած էին աշխարհիս անուանի երաժշտապետների, նուագիչների, երգիչների ու երգչուհիների լուսանկարները հոլհարի ձևով միմեանց միացրած։ Միւս անկիւնում դրուած էր մի փոքրիկ գրասեղան, ծանրարեռնուած գանգան էժանագին գեղարուեստական իրերով։ Այնտեղ տեսայ Բեթհովէնի, Մօցարտի, Շէքսպիրի և Վագների կաւեայ կիսաբձանիկները ապիսի զոյնով, մի հաստ խեցեղէն շուն, մի կոտրուած սրինգ և ուրիշ այդպիսի պարագաներ։ Սեղանի առաջին պատից կախած էին մի կիթառ,

մի մանդոլինա և մի ինչ-որ թատրոնական զգեստ՝ նման Ռիգոլետտոյի հագստին։ Ամենահետաքրքրականը մի նկար էր պոլիտրայի վրայ, որ ներկայացնում էր երկու պատանիների մենամարտութիւնը բռունցքներով մի փողոցային երգչուհու համար։ Աղջիկն ընկել էր մէջտեղ գզգզուած մազերով և աշխատում էր բաժանել ախոյեաններին...

—Տեսնում էք,—շշնջաց ականջիս Կավալլարօն, — երաժշտութիւն, նկարչութիւն, պօէզիա, ոչինչ չի մոռացուած։

Այդ միջոցին հիւանդը շարունակում էր գանգատուել.

—Ահա երեք օր է, առաւօտներն էլ երեսը չեմ տեսնում։ Նա չի քնում, Ստեֆանիա, չի քնում։ Չէ՞ որ կարող է հիւանդանալ, յետոյ ես ինչ անեմ, ո՞վ կըպահի ինձ։ Գիշեր-ցերեկ թատրոններումն է։ Հօր ցաւը որգուն է անցել։ Անիծուի նրա գերեզմանը, օրս սևացրեց։

—Է՛լի միևնոյն գանգատները,—արտասանեց Լուիզան,—և ի՞նչպէս չի յոգնում այդ կինը։ Եսամո՛լ...

Արդարև, հիւանդի աչքերի մէջ երևում էր եսամոլի հոգի, թէև զեղեցիկ էին այդ աչքերն և դեռ բաւական թարմ մօտ յիսուն տարեկան կնոջ թառամած դէմքի վրայ։

Հրաժեշտ տալիս նկատեցի մի բան. Կավալլարօն թագուն Լեոնի ձեռի ափի մէջ սեղ-

մում էր մի ոսկեդրամ, պատանին հրաժարվում էր ընդունել։ Այն ժամանակ բարիտոնը քայլերը դանդաղեցրեց, մնաց սենեակում, թույլ տալով որ Լևոնը մեղ ուղեկցի։

Սինեօրա Ստեֆանիան համառօտ պատմեց ինձ Լևոնի մասին հետևեալը։—Նրա հայրը եղել է թատրոնական վարսավիր և չափազանց գեղարուեստասէր։ Համեստ, գլուխը քաշ արհեստաւորը յանկարծ անձնատուր է լինում հարբեցողութեան կործանիչ ախտին և ոչ առանց պատճառի։ Պարզւում է, որ նա անյոյս սիրահարուած է մի երգչուհու վրայ։ Կուլիսների հետևում շուտով նա դառնում է ընդհանուր կատակների ու ծաղրի առարկայ։ Արտիստներից սկսած մինչև վերջին թատրոնական ծառան ծիծաղում են նրա յանդուգն զգացման վրայ դէպի մի գեղեցկուհի, որի երկրպագուների թւում անուանում են նաև տեղական քաղաքագլուխ, յայտնի միլիոնատէր ու բարեգործ յոյն Մարաղլիին...

Հալածանքն ու ներքին վիշտը ներգործում են վարսավիրի վրայ այնչափ, որ սրտի դառնութիւնն օղու մէջ անգամ չի կարողանում խեղդել։ Մի օր նա ծեծում է ռեժիսորին, որ ծաղրելիս է լինում նրա չինած մի կեղծամը, անուանելով նրան «սրիկայ»։ Նրան զրկում են թատրոնական վարսավիրի պաշտօնից։ Այդ ժամանակից նա դառնում է օղու և

փողոցների անդառնալի սեպհականութիւն։ Եւ մի երեկոյ ոստիկանները գտնում են նրան մի ծառի տակ, ձիւնի մէջ թաւալուած, բերում են տուն։ Երեք օր չանցած՝ մեռնում է տիֆից, թողնելով կնոջն ու զաւակին ճակատագրի հաճոյքին։

Այրին, ամուսնու արհեստից զզուած ու տանջուած, ութ տարեկան Լևոնին յանձնում է մի ատաղձագործի և ինքը սկսում ուրիշների համար ճերմակեղէն կարել։ Երկու ամիս չանցած՝ մանուկն արհեստանոցից փախչում է ուսումնարան։ Բարի մարդիկ տալիս են նրա ուսումնավարձը։ Նա սովորում է գրել-կարդալը։ Այրին յանձնում է նրան հագուստեղէնի վաճառատուն։ Մանուկը չի մնում այնտեղ։ Մի անբնական ձեռք մղում է նրան դէպի թատրոն։ Նա դառնում է ափիշներ բաժանող օրական յիսուն կոպեկով և թատրոնների վերնայարկը բարձրանալու իրաւունքով։

Անցնում է կուլիսների հետ, կամաց-կամաց ծանօթանում դերասանական աշխարհի հետ։ Այժմ բոլոր արտիստները ճանաչում են նրան, բոլորին նա ծառայութիւններ է անում և բոլորը սիրում են նրան իւր հեղութեան և աշխուժութեան համար։ Նա ոչ մի ներկայացում բաց չի թողնում, մանաւանդ իտալական խմբի ներկայացումները։ Նա ցերեկներն էլ թատրոնումն է կամ նրա շուրջը։

—Սինեօր, կըզարմանաք եթէ ասեմ, որ այժմ նա երբեմն ստեղծում է նորեկ անծանօթ արտիստի համար փառք մեր քաղաքում, —շարունակեց մօր փոխարէն Լուիզան։—Այո, այո, սինեօր Զեպլինի, մի հակառակէք, այս ճիշդ է։ Նա ունի բազմաթիւ յոյն ու հրէայ ընկերներ, որոնք զարմանալի հաւատ ունին դէպի նրա ճաշակը և սիրում են նրան։ Դրանք կլակեօրներ չեն, ոչ, այլ թատերասէրներ։ Զգիտեմ, գուցէ նրանք կաշառւում են, բայց Լեոնին՝ ոչ, երբէք չի կարելի կաշառել։ Սինեօր Կավալլարօ, ճիշդ եմ ասում թէ ոչ։

—Նա ազնիւ է որպէս նորածին և զգայուն՝ որպէս ընարի լար, —արտասանեց բարիտոնը։—Նա իմ հանգուցեալ եղբօր տիպարն է...

—Բայց ինչպէս է ստեղծում անծանօթ արտիստի համար փառք,—հետաքրքրուեցի ես։

—Առաջին ծափահարութեամբ, — պատասխանեց Կավալլարօն։

—Չեմ հասկանում,—ասացի ես։

—Սինեօր, երևի, չգիտէք ինչ ասել է արտիստի համար առաջին ծափն անծանօթ քաղաքում։ Զատ բան, երբեմն ամեն ինչ։ Դուք թատերասէր էք, նկատած կըլինիք մի երևոյթ։ Թատրոնական սրահում նստող հասարակութիւնը հազիւ է վստահանում առաջին ծափը տալ անծանօթ արտիստին։ Զատ անգամ, հոգով հիացած երգչի երգով, նա ամաչում է իւր հիացումը արտայայտել. կարող են նրան անճաշակ համարել։ Բայց ահա օգնութեան է հասնում Լեոնը։ Նա ազատ է հասարակական նախապաշարումներից, չի քաշւում առաջին ծափը տալ։ Խումբը հետևում է նրա օրինակին։ Այն ժամանակ հասարակութիւնը նոյնպէս ծափահարում է։ Միւս օրը լրագիրները գրում են այդ ծափահարութիւնների մասին, և ահա անծանօթ արտիստի աջողութիւնը ապահով է։

—Եթէ, ի հարկէ, արտիստը շնորհք ունի,—աւելացրեց Զեպլինին։

—Այո, ի հարկէ։

—Բայց քո Լեոնը կարող է շատ անգամ անշնորհքին էլ տալ առաջին ծափը,—նկատեց Բօրելլին։

—Ներողութիւն,—պատասխանեց Կավալլարօն, հեգնօրէն ժպտալով,—մեր խմբի վերաբերմամբ դոնէ նա դեռ այդպիսի սխալ չի գործել։

Ես գուշակեցի, որ Բօրելլին դեռ չի արժանացել Լեոնի ծափին։

Վիճաբանութիւնը գուցէ շարունակուէր, եթէ կրկին ներս չմտնէր Լեոնը։ Այս անգամ նրա դէմքը բաւական հանգիստ էր։ Նա հրաւիրեց Կավալլարօին մի անկիւն և, չնչալով ականջին, բաց թողեց նրա գրպանը մի ոսկեդրամ։ Ցետոյ իմացայ, որ մեր դուռ գալուց

3090
7/XI 1922

յետոյ նա իւր մօր բարձի տակ դտնում է այդ դրամը։ Հասկանում է, որ Կավալլարօն պիտի դրած լինի, վերցնում է, բերում, վերադարձնում տիրոջը։

—Յամառ ես, Լևոն, յամառ,—գոչեց Կավալլարօն, շփելով պատանու գլուխը հայրական սիրով։—Դէ լաւ, մի նեղանար, նստիր, մի փոքր խօսենք։ Դու, ի հարկէ, երէկ թատրոնումն էիր։

—Էի։

—Հաւանեցիր ինձ...

—Ի հարկէ։

—Ապա ինչո՞ւ երեսդ դարձնում ես ինձանից... Ա՜ա, կեղծո՞ւմ ես...

—Սինեօր Կավալլարօ, երէկ դուք շփոթուած էիք։

—Ե՞ս. ամենևին։ Սխալւում ես։

—Ո՛չ, սինեօր, չեմ սխալւում։ Երբ հանդիսատ էք, երբէք չէք շեղւում։ Մենք ամենքս իմացանք, որ ձեզ բարկացրել են։

—Քեզ այդպէս է թուացել։ Ոչ ոք ինձ չէր բարկացրել։ Ահա տեսա՞ր, Լևոն, ինձ դեռ լաւ չես ճանաչում։

Լևոնը նայեց Կավալլարօի աչքերին այնպիսի պարզ ու խելօք հայեացքով, որ կեղծել նրա մօտ անկարելի էր։ Կավալլարօն, ձեռը դնելով նրա ուսին, ասաց.

—Չես սխալւում, բարեկամս, երէկ ներ-

կայացումից մի քիչ առաջ ես խոշոր վէճ ունեցայ ռեժիսսօրի հետ։

—Ո՛չ, սինեօր Կավալլարօ,—ասացէք՝ դիրիժօրի հետ,—ուղղեց Լևոնը համարձակ։

—Դու ո՞րտեղից իմացար։

—«Օ՜ Կառլօ»-ն երգելիս, սինեօր Մարտինին կէս տոն բարձր վերցրեց ձեզ շեղելու համար։ Սինեօր Մարտինին բոլորի վերաբերմամբ անաչառ է, բացի իրանից։ Ռեժիսսօրի պատճառով նա ձեզանից վրէժ չէր առնիլ։ Նա քինախնդիր է միայն իւր անձնական հակառակորդների դէմ։

—Լսո՞ւմ էք, սինեօր,—դարձաւ ինձ Կավալլարօն սգեորուած,—այս պատանու բերանով խօսում է ինքն երաժշտական բնազդումը և դիտողական ձիրքը։

Լևոնը վերկացաւ, գլուխ տուեց, շնորհակալութիւն յայտնեց մեզ մեր այցելութեան համար և շտապեց դէպի դռները։ Այլ ևս նա այնքան դրաւել էր ինձ, որ կամեցայ անպատճառ հետը խօսել։

—Հայերէն գիտէ՞ք,—հարցրի ես, երևի, հայրենասիրական զգացումից դրդուած։

—Գիտեմ։

Նա, ինչպէս և իւր մայրը, խօսում էր ռուսերէն լեզուով տաճկական արտասանութեամբ։ Իտալացիներից միայն տանտիրուհիս և նրա աղջիկը գիտէին ռուսերէն, նաև Կա-

վալլարոն։ Միւսների հետ Լևոնը խոսում էր իտալերէն։

Մի քանի հարցեր տուեցի նրան պարզ հայերէն լեզուով։ Նա ապշած նայեց երեսիս և ժպտաց։

—Չեմ հասկանում,—դարձայ ես ռուսերէն լեզուի օգնութեանը։

—Այդ լեզուն եկեղեցական է,—խոսեց նա տաճկերէն լեզուով,—իմ իմացած հայերէնը ահա այս լեզուն է։

Ինձ համար նորութիւն չէր Բեսարաբիայի հայերի մայրենի լեզու չիմանալը։ Բայց առաջին անգամն էի պատահում մէկին, որ տաճկերէնը հայերէն էր համարում։

Ես խնդրեցի Լևոնին այցելել ինձ շուտ-շուտ և իմ կողմից խոստացայ այցելել նրան։

Նա ինձ երկար սպասել չտուեց։ Հաջորդ օրն իսկ եկաւ սենեակս և ուրախ-ուրախ յայտնեց, թէ մայրն արդէն առողջանում է։ Ուղիղն ասած, ես չէի հետաքրքրւում մօր վիճակով, ինձ զբաղեցնողը որդու ճակատագիրն էր։

Երբ խօսք բաց արի թատրոնի ու երաժշտութեան մասին, պատանին կերպարանափոխուեց, ինչպէս կրակոտ սիրահար, երբ խոսում է նրա սրտի ընտրեալի վերաբերմամբ։ Ոգևորուած նկարագրեց իւր լսած երգիչների ու նուագիչների տաղանդը։ Վերջին

հօթ տարուայ ընթացքում նա լսել էր գրեթէ բոլոր նշանաւոր երգիչներին ու նուագիչներին, որոնք այցելել էին Ռուսաստանն Օդեսայի վրայով։

—Երեկ, դու էլ նուագում ես կամ երգում,—հարցրի ես։

—Ո՛չ, սինեօր։

—Չեմ հասկանում։

—Երգելու համար ձայն չունիմ։

—Իսկ նուագելու համար գործիքներ շատ ունիս սենեակումդ։ Երէկ տեսայ։

—Այո, նուագում եմ մանդոլինա և կիթառ։

—Նոտաներ գիտես։

—Սինեօրինա Լուիզան սովորեցրել է։ Դուք լսել էք նրա երգեցողութիւնը։ Հիանալի ձայն ունէ։ Այնպէս չէ՞։ Այո՛։ Հաւանել էք։ Ի հարկէ, ով չի հաւանիլ։ Օ՜օ, Լուիզային մեծ ապագայ է խոստանում...

Նա լռեց, հառաչեց, հայեացքը ձգելով դէպի անորոշ տարածութիւն։ Ես նրա դէմքի վրայ նշմարեցի հոգեկան գաղտնի տառապանքի արտայայտութիւն։ Խոստովանւում եմ, այն ժամանակ նշանակութիւն չտուեցի նրա հառաչանքին։ Եւ մի՞թէ կարող էի երևակայել տասնուհօթ տարեկան պատանու հոգին որքէ լուրջ վշտի ընդունակ։

—Այդ բոլորը լաւ,—ասացի ես,—բայց

դու ինչով ես կերակրում քեզ ու մորդ։ Չէ՞ որ հայրդ ժառանգութիւն չի թողել։

—Գործ շատ կայ, սինեօր։ Պրոգրամներ եմ ծախում, ստատիստի դեր եմ կատարում բեմի վրայ, պոչ եմ բռնում։ Ա՜խ, սինեօր, եթէ միջոց ունենայի, կըսովորէի վիօլոնչէլ նուագել ու կըմտնէի երաժշտական խումբը։

—Ցիշում ես հօրդ, Լևոն։

—Ի հարկէ, շատ լաւ եմ յիշում։

—Ասում են, նա բարի մարդ էր։

—Այո, սինեօր, շատ բարի էր, միայն...

—Հարբում էր,—լրացրի ես պատանու խօսքը։

—Նա երբէք ինձ չէր ծեծում, չէր էլ բարկանում վրաս։ Բայց ոչ, մի անգամ բարկացաւ, յիշում եմ...

—Երևի, չարութիւն էիր արել։

—Այո։ Այն ժամանակ նրա խանութն ահա այն անկիւնի կապոյտ տան ներքին յարկումն էր։ Ամեն օր գնում էի այնտեղ կեղծամներ սանրում։ Մի օր նա տխուր էր շատ։ Մի ժեներալ եկաւ երեսը սափրել տալու։ Նրա մօտ միշտ մեծամեծներ էին գալիս։ Ես վերցրի մի սանր, վրէն քաշեցի մի թուղթ ու սկսեցի շրթունքներովս նուագել։ Ժեներալը բարկացաւ ու հօրս հրամայեց ինձ դուրս անել։ Հայրս մօտեցաւ, ականջս քաշեց ու, վզակոթիս տալով, վանդեց դուրս։ Բայց յետոյ, երբ ժեներալը գնաց, կանչեց ինձ ներս, աչքերս սրբեց, համբուրեց ու ասաց. «Եթէ դու կունենաս երաժշտական ընդունակութիւն, ինձ դրաւ կըդնեմ, քեզ չեմ թողնիլ առանց ուսման»։ Այո, սինեօր, շատ լաւ մարդ էր, թէև հարբում էր։ Սինեօր, ներեցէք, որ ժամն է։

—Ցասնումէկ։

—Օօ՜, ես ուշացայ։ Ներողութիւն, էլի կըգամ։ Ձեր սենեակը լաւն է։ Դուք ինձ գըրքեր կըտաք կարդալու, այո։ Շնորհակալ եմ։ Ցտեսութիւն։ Այսօր Կալաֆատիի բենեֆիսն է։ Թատրոնը լիքն է լինելու։ Պէտք է գնամ, պոչ բռնեմ։

Ես կամեցայ հարցնել՝ ինչ ասել է «պոչ բռնել», բայց Լևոնն արդէն չքացել էր։

Կալաֆատին ընտիր երգչուհի էր։

Գնացի թատրոն տոմսակ վերցնելու։ Կասսի առջև կանգնած էր գնողների մի երկայն շարք, որ հասնում էր մինչև փողոցի կէսը։ Եղանակը սառն էր, խոնաւ, անախորժ։ Պիտի բռնէի շարքի վերջին տեղն և ամենաքիչը մի ժամ սպասէի մինչև հերթս հասնէր։ Ուզում էի վերադառնալ տուն, երբ լսեցի իմ ազգանունը։ Դա Լևոնի ձայնն էր, որ կարող էի ճանաչել հարիւրաւոր ձայների մէջ։ Նա կանգնած էր կասսից մի քանի քայլ միայն հեռու, երկու հրէաների միջև սեղմուած։

—Ցոմսոմ՞ակ էք ուզում գնել,—հարցրեց նա տաճկերէն։

—Այո։

—Եկէք, տեղս բռնեցէք, ապա թէ ոչ, շուտ չէք հասնիլ կասսին։

Ես բռնեցի նրա տեղը։ Նա գնաց կանգնեց շարքի վերջում։ Այդտեղ միայն իմացայ ինչ՞ասել է «պոչ բռնել»։ Լևոնը կանգնում էր շարքի ետևում և, երբ բաւական մօտենում էր կասսին, իւր հերթը ծախում էր ցանկացողին հինգ-տասը կոպէկով։ Ցետոյ դարձեալ գնում էր ու շարքի ետևում կանգնում։ Նա ամեն միջոց գործ էր դնում թատրոնից չհեռանալու համար։ Նրա օդը, կերակուրը, կեանքը, ամեն ինչը թատրոնն էր։

Իմ հետաքրքրութիւնն այդ պատանու վերաբերմամբ արդէն այնքան մեծ էր, որ աշխատում էի ամեն օր նրան տեսնել։

Մի առաւօտ նրա մօտ հանդիպեցի երկու անծանօթների, որոնց հետ իւր սենեակի դռների առջև կանգնած խօսակցում էր։

Մէկն իւր հասակի պատանի էր հնամաշ հագուստով, բայց գլխին նոր գլխարկ։ Դէմքի գծերը բուն հրէական էին, աչքերը դեղնագոյն, մազերը գրեթէ կարմիր, երեսը ինչ-որ բծերով ծածկուած, սակայն համակրելի։

Միւսին ես շատ անգամ էի տեսել քաղաքի զբօսավայրերում ու թատրոնների առ-

ջև։ Դա մօտ քսան ու հինգ տարեկան երիտասարդ էր, այնքան նիհար, այնքան բարակ ու զունատ, որ, կարծես, մագաղաթից լինէր շինուած։ Նրա երեսն երկարաւուն էր ու նեղ, աչքերը կլոր ու փոքրիկ, կոկորդի ոսկորը դուրս ցցուած։ Հարթ ու նօսր մազերը, մինչև ունքերը քաշած կակուղ գլխարկի տակից ցած իջնելով, եախուի պէս կպել էին բարակ պարանոցին և ընդգրկել կոկորդի մի մասը։ Սև սիւրտուկի վրայ հագած էր թիկնոցաւոր վերարկու առանց աստառի, լայն թևերով։ Մի ձեռին բռնած էր բազկի հաստութեամբ մի դեղնագոյն փշոտ փայտ, միւս ձեռին անկազմ գրքոյկներ և տեղական լրագիրների համարները։

—Իմ ընկերներն են,—ասաց Լևոնը, անմիջապէս ծանօթացնելով ինձ նրանց հետ։—Բանաստեղծ Զաուշէնկո, Իցկո Մարգուլիս։

Ես հաճոյքով սեղմեցի երկուսի էլ ձեռը։

—Զաուշէնկոն սիրում է մարդկանց հետ ծանօթանալ իւր երկերի միջոցով,—ասաց լայն վերարկու հագած երիտասարդը, որ ինքը բանաստեղծն էր։

Եւ անմիջապէս, գրքոյկներից մէկը պահելով քթիս առջև, հարցրեց.

—Չէք՞ կամենալ, արդեօք, մի օրինակ վերցնել։

—Հաճոյքով։

Գրքոյկի վերնագիրն էր. Часы горя и страданій; стихотворенія Леонида Николаевича Чаушенко.

—Դուք գուցէ զարմանաք, մօսեօ,—ասաց նա, դնելով վարտիքի գրպանը գրքոյկի արժէքը,—որ ես, այսպէս ասած, յանդգնեցի կապել ձեր վզին իմ երկը։ Բայց մի վրդովուէք, մարդիկ իրանց խիղճն են ծախում, Չաուշէնկօն իւր երկերը։ Նախկին գրաշար եմ։ Ինքս գրում եմ, ինքս շարում, ինքս տպում, ինքս վաճառում, ինքս էլ ուտում իմ սրտի արեան վաստակը...

—Իսկ ես նախկին և ներկայ ջհուդիկ եմ,—ընդհատեց բանաստեղծի խօսքը Իցկօ Մարգուլիս կոչուած պատանին,—երբեմն լրագիրներ եմ ծախում, երբեմն էլ թատրոններում ծառայում։ Նեղ տեղն ընկնելիս փողոցներում կօշիկներ եմ սրբում։

—Եւ երևակայում է իրան ապագայ Ռուբինշտէյն,—հեղնեց Չաուշէնկօն։

—Ա՛խ, պարոն, արդեօք դուք երաժշտութեան ուսուցիչ էք։ Ո՞չ։ Ափսոս։ Ես կըկամենայի ձեզանից դաշնամուրի վրայ դասեր վերցնել։ Ծիծաղիր, Չաուշէնկօ, բայց էլի ես պիտի քո Часы горя и страданій երաժշտութեան վերածեմ։ Դէ լաւ, գաւազանդ մի ցոյց տուր, ես երկչոտ ջհուդներից չեմ, ես հրէայ եմ։ Արևվիրուրշի, սինեօր... Գնանք, բանաստեղծ։ Չիմբա, չիմբա—չիլլա՛...

Նա քամու արագութեամբ թռաւ դուրս։ Չաուշէնկօն հետևեց նրան, հաստ գաւազանի ծայրն աղմուկով զարկելով փայտեայ սանդուղի աստիճաններին։

Փառք Աստուծոյ, այս անգամ Լևոնի մայրը տանը չէր. գնացել էր շուկայ պաշարեղէն գնելու։ Լևոնն ասաց, թէ Չաուշէնկօն ու Իցկօ Մարգուլիսն եկել էին խորհրդակցելու իտալական խմբի առաջին երգչուհի Բարբինիի բենեֆիսի մասին։ Պատրաստւում են արտաքոյ կարգի ցոյցեր։ Չաուշէնկօն մտադիր է բենեֆիսի պատուին նուիրել երգչուհուն մի բանաստեղծութիւն, որ պէտք է թարգմանել իտալերէն։

Ես, Լևոնին փորձելու համար, ասացի.

—Կրցանկանայի իմանալ, դուք ինչ գործունիք երգչուհիների բենեֆիսների հետ։

—Ի՞նչպէս թէ գործ չունինք,—գոչեց նա զարմացած,—երգչուհիները գեղարուեստին չեն ծառայում։

—Շատ էլ ծառայում են, յեռոյ։

—Ամեն մարդ պարտաւոր է պատուել գեղարուեստը։

—Գեղարուեստը շռայլութիւն է։ Նա հարուստների համար է։ Իսկ դու և քո ընկերները աղքատ էք...

—Հարուստներն արտիստներին նուէրներ

են անում, իսկ մենք ցոյցեր...

Հազիւ մի քանի բոպէ խօսել էինք, երբ ներս մտաւ Լեոնի մայրը։ Դնելով պաշարեղէնի զամբիւղը Ձէքսպիրի քթի առջև, նա իսկոյն նեթ յարձակուեց որդու վրայ.

—Էլի փողոցային սրիկաները այստեղ էին, հա։ Երևի, խորհուրդ ունէիք։ Մի շարաթ է գլուխս ցաւեցնում էք այդ երգչուհու բենեֆիսով։ Պարոն, տեսաք խօմ, տեսաք այս անզգամի ընկերներն ովքեր են։ Ի՞նչ կարող է սովորել այդպիսիներից։ Փո՞ւչ, փո՞ւչ զաւակ...

Երբեմն մայրերը կարող են իրանց հարազատ զաւակների թշնամի լինել։ Անշուշտ Լեոնի մայրը սիրում էր որդուն, բայց չէր տեսնում իւր և նրա մէջ եղած վիհը, այն ահագին վիհը, որ չէր կարելի լեցնել ու հարթել անվերջ նախատինքներով։ Մի անգամ այս մասին խօսում էինք մեր սեղանատանը. սինեօրա Ստեֆանիան և Բօրելլին պաշտպանեցին մօրը, իսկ միւսները՝ որդուն։ Ռաիսան ասաց.

—Մեզ հրէաներիս համարում էք նիւթապաշտ։ Ես դէմ չեմ, ճիշդ է. բայց, հաւատացէք, ոչ մի հրէայ, մանաւանդ հրէուհի իւր որդու վերաբերմամբ այդ քրիստոնեայ կնոջ չափ նիւթամոլ չէր լինիլ։ Հրէան խելօք կերպով է հարստահարում իւր որդուն։ Եթէ իւր որդու մէջ տեսնում է երաժշտական կամ երգելու ձիրք, աշխատում է հէնց այդ ձիրքը

շահագործել։ Նա չի ստիպում նրան արհեստաւոր կամ վաճառական դառնալ։

Երկու անգամ Լեոնն իմ ներկայութեամբ լաց եղաւ, երբ մայրը յանդիմանում էր նրան իբրև «անպէտք» զաւակի։ Նա փաթաթուեց մօր պարանոցին, գոչելով.

—Մամա, մամա, մի բարկանար, ես քեզ սիրում եմ։

Օ՜, ոչ, այդ պատանին չէր կեղծում։ Նա սիրում էր մօրն անչափ, և այս նրա դըժբաղդութեան պատճառներից մէկն էր։

—Կարելի՞ է,—լսեցի մի առաւօտ դռների ետեւից Լեոնի ձայնը, երբ դեռ անկողնից չէի վերկացել։

Ուրախութեամբ հրաւիրեցի նրան ներս։ Նա գլխաբաց էր, երեսն անլուայ, աչքերի սպիտակուցները դեղնած, մազերը գզգզուած, դէմքը մաղաղաթի պէս գունատ։ Կռնատակին պահած էր մանդոլինան և այնպէս ամուր սեղմած, որ, կարծես, վախենում էր ձեռքից խլեն։ Նրա բաճկոնի կոճակները բաց էին, փողկապ չունէր, շապկի եզրերը բաժանուել էին և երևան էին հանում նրա նիհար կուրծքը։ Ծնկների վրայ կուչկուչուած վարտիկի ծայրերը բարձրացել էին, երևում էին կօշիկների ականջները։

—Ներողութիւն, սինեօր,—ասաց նա, ցրուած հայեացքը պատեցնելով տուն կողմը,

—կարծում էի վեր էք կացել։

Ես շտապեցի նրան հանգստացնել, թէ հէնց վեր էի կենում, երբ եկաւ։ Նա խնդրեց թոյլ տալ իրան կէս ժամ մնալու իմ սենեակում։ Ոչ միայն կէս ժամ, այլ միշտ, երբ կամենար և որքան կամենար, կարող էր օգտուել իմ սենեակից։ Բայց այս անգամ ինձ չփոթեցրեց նրա այլայլուած կերպարանքը։

—Ի՞նչ է պատահել,—հարցրի, կարծելով որ թագնուում է ինչ-որ հալածողներից։

Մի քանի վայրկեան չպատասխանեց։ Ես հարցս չկրկնեցի, սկսեցի հագնուել։ Նա մօտեցաւ դռներին, նայեց դէպի դուրս ու յետ եկաւ, կանգնեց սենեակի մէջտեղում, աւելի ամուր սեղմելով մանդոլինան կռան տակ։

—Գիտէք, սինեօր,—ասաց,—կարող է մայրս գալ։

—Ի՞նչ անենք, թող գայ։

—Ես նրանից եմ փախել։ Ուզում էր մանդոլինաս կոտրտել, վառարան դցել։

—Ինչո՞ւ։

—Մինչև լոյս չեմ թողել նրան քնելու, նուագել եմ։

Յետոյ պատմեց, թէ երէկ օպերային երաժշտական խմբի բենեֆիսն է եղել։ Ներկայացումից յետոյ բոլոր երաժիշտները գնացել են հիւրանոց ընթրելու։ Խմբապետը Լեոնին էլ հրաւիրել էր։ Ընթրիքի միջոցին մէկը վիոլոն-

չելով նուագել է, ի միջի այլոց, և՛ մի սպանական եղանակ՝ «Մադրիդի շրջմոլիկը»։

—Գլխիցս չէր դուրս գալիս այդ եղանակը։ Ուզում էի անպատճառ սովորել հէնց այս գիշեր, որ չմոռանամ։

—Եւ սովորեցիր։

—Այո։

—Ինձ համար կընուագե՞ս։

Լեոնի ընաւորութիւնը պարզ էր։ Նա կոտրատուել չգիտէր, ամեն բանի վերաբերում էր հասարակ։ Ես արդէն մի քանի անգամ լսել էի նրա նուագումը։ Վատ էր նուագում թէ լաւ, չգիտեմ, միայն զգացւում էր և զգացնել տալիս լսողին։

Նա նստեց աթոռի վրայ, գրկեց մանդոլինան։ Առաւօտեան արեգակի կիտրոնագոյն շողերը սփռուել էին ներս։ Լեոնի աչքերն անգիտակցաբար դարձան դէպի այդ շողերը, կարծես, ինչ-որ գաղտնի մագնիսի զօրութեամբ։ Ա՛խ, այդ վեր ուղղուած աչքերը, այդ հեզ դէմքը։ Անցել է ընդամենը երկու տարի, բայց կանցնեն շատ տարիներ, դարձեալ այդ օրը վառ կըմնայ յիշողութեանս մէջ։

Ի՞նչ էր Լեոնի նուագածը՝ բացատրել չեմ կարող։ Յիշում եմ միայն ինձ վրայ գործած տպաւորութիւնը։ Կիսամերկ բևեռուել էի սենեակիս մէջտեղում և լսում էի բուռն զգացմունքների վիժումը։ Վիշտ և բերկրութիւն,

վոթորիկ ու մեղմ թախիծ խառնուել էին «Մադրիդի շրջմոլիկի» մէջ. գոնէ այսպէս էր թուում ինձ։ Գուցէ դա մի կրակոտ, ասպետական ժողովրդի սրտի հրաբուղխն էր, փոքր ինչ կանոնաւորուած ինձ անյայտ մի հանճարի ստեղծագործ ուժով, բայց հետաքրքրականն ինձ համար նուագողն էր։ Կարծես, նիւթեղէն պատանին չքացել էր, մնացել էր միայն նրա ստուերը։ Նա չէր նկատում իմ ներկայութիւնը, քաղցր հնչիւնների հեղեղով կլանուած նեարդերը չէին զգում աշխարհի նիւթականը։ Կարծես, հոգին ամբողջովին ձուլուել էր նուագած եղանակի հետ ու սլացել հեռու մի աշխարհ՝ ընտիր հոգիների կախարդական աշխարհը։

Երբ աւարտեց, մի քանի վայրկեան լուռ էր, անշարժ, աչքերը տակաւին յառած արեգակի շողերին, որոնք հետզհետէ գունատուում էին։

Ես չկարողացայ ինձ զսպել, ոգևորուած գոչեցի.

—Կեցցէս, Լևոն, կեցցէս...

Բայց նա չլսեց։ Անշարժ էր. նուրբ շրթունքները, որոնք միշտ սեղմուած էին, զողում էին նկատելի։ Ցանկարծ նրա ձեռները թուլացան, գլուխը մի փոքր թեքուեց ուսին, մանդոլինան հանդարտիկ սահեց կրծքից և ընկաւ նիհարիկ ծնկների վրայ։ Եւ նրա դէպի

շողերը յառուած աչքերի մէջ նշմարեցի արցունք։

—Մանուկ, ինչու՞ ես լալիս,—գոչեցի կարեկցութեամբ։

Նա ոտքի կանգնեց և, ճակատից հեռացնելով թանձր մազերը, տարօրինակ ձայնով արտասանեց.

—Վիոլոնչելիստն ինձ ասաց՝ Մադրիդի շրջմոլիկը դժբաղդ է եղել։ Ցուրտ գիշերները երգել է գրանդի աղջկայ լուսամուտի տակ և լաց եղել... Նրա հայրը աղքատութիւնից մի օր կախուել է ծառի վրայ, խեղդուել։

Այդ ժամանակ ես չհասկացայ նրա խօսքերի խորքերում թաքնուած բուն վիշտը և կարծեցի զառանցում էր։ Արդարև, զառանցում էր նա, բայց ինչու՞ և ի՞նչ...

—Ա՛խ, ներողութիւն,—գոչեց նա, յանկարծ ուշքի գալով,—ես... անքնութիւնից...

—Այո՛, Լևոն, անքուն ես։ Եթէ կամենում ես՝ հանգստացիր սենեակումս։

—Չնորհակալ եմ, սինեօր։ Թոյլ տուէք միայն մանդոլինաս թողնեմ այստեղ։ Մայրս կարող է նրան վառարան գցել։ Երէկ լուսամուտով փողոց շպրտեց կիթառս ու մի քանի լուսանկարներ։

—Լևոն, մայրդ չար կին է,—գոչեցի ես, մինչև հոգուս խորքը վրդովուած այրու վայրենի արարմունքից։

Լևոնը չափազանց վշտացաւ և սկսեց պաշտպանել մօրը։ Ո՛չ, ո՛չ, չար կին չէ նրա մայրը, ընդհակառակը շատ բարի է։ Նա սիրում է Լևոնին։ Երբեմն քնած ժամանակ Լևոնը զգում է, որ իրան թագուն համբուրում է։ Նա սիրում է, բայց սէրը ցոյց չի տալիս, վախենում է, որ Լևոնն երես առնի, աւելի փչանայ։

—Աւելի փչանա՞ս,—դոչեցի ես,—բայց մի՞թէ դու փչացած ես։

—Ի՞նչ գիտեմ, սինեօր. մայրս ասում է՝ «ով իւր ծնողների կամքը չի կատարում՝ փուչ որդի է»։

—Է՛հ, ուրեմն, ինչո՞ւ չես կատարում մօրդ կամքը,—հարցրի դիտմամբ, կամենալով փորձել նրան։

Նա մի տխուր հայեացք ձգեց երեսիս, ոչինչ չասաց։ Ես այդ հայեացքի մէջ կարդացի նրա անզօրութիւնը՝ դառնալ մօր կամքի հլու զաւակ։ Անվիճելի էր, որ նա շուտով կըհրաժարուէր կեանքի բոլոր բարիքներից, քան թատրոնից։

Ճաշի միջոցին պատմեցի նրա տարօրինակ տրամադրութեան մասին։ Լուիզան լսեց լարուած ուշադրութեամբ։ Նրան նկատելու չափ շփոթեցրեց այն, ինչ որ Լևոնն ասել էր «Մադրիդի շրջմոլիկի» մասին։ Կավալլարօն խորհրդաւոր ժպտում էր և գլխով յանդիմանական շարժումներ անում, Լուիզայի աչքերին նայելով։ Ուսանողը նկատեց, թէ Լևոնն աննօրմալ էակ է, մի տեսակ հոգեկան հիւանդ։ Նրա հասակի ու զգացումների մէջ չկայ համերաշխութիւն։ Իսկ ուղեղը զարգանում է անկանոն։ Այս նկատողութիւնը չափազանց վրդովեցրեց Կավալլարօին։ Չխնայելով ռուս լեզուի քերականական կանոնները, նա սկսեց հակաճառել՝

—Հոգեկան հիւանդ, հոգեկան հիւանդ. վերջին ժամանակ, կարծես, գիտութիւնները հէնց նրա համար են սովորում, որ բոլոր տաղանդաւոր մարդկանց հիւանդ համարեն։ Ո՛չ, պարոններ, իսկական հոգեկան առողջները հէնց Լևոններն են։ Մի՛այն նրանք դժբաղդ են, սինեօր ստուդենտ, հասկանում էք, դժբաղդ, որ չեն ծնուած կեանքի բարեյաջող պայմաններում։ Փոխանակ գիտնականօրէն բացատրելու այդ պատանիների հոգին, օգնեցէք նրանց. ահա՛ ինչ։ Մի թողնէք ադամանդը փողոցի ցեխի մէջ։ Ափսո՛ս է Լևոնը։

—Նա օրից օր հալւում է մոմի պէս,—շարունակեց Կավալլարօն կարեկցաբար,—նրա կազմը նուրբ է, չի կարող դիմանալ այդ տեսակ ապրուստի։ Երբեմն գիշերը, հազիւ անկողին պառկած, վեր է կենում, գնում կանգնում է կասսի առջև, առանց վերարկուի, մի քանի կոպէկ վաստակելու համար։ Վաստակածի մի մասն Շել թատրոնի վրայ է ծախսում։ Ահա

վաղը սինեօրա Բարբինիի բենեֆիսն է։ Դա նրա ամենասիրելի երգչուհին է։ Համոզուած եմ, որ այժմ իրան տանջում է, որպէս զի կարողանայ որ և է կերպ վաղուայ ցոյցերը գեղեցկացնել...

Հետևեալ երեկոյ ես թատրոնումն էի։ Նստած մի բարեկամ ընտանիքի հետ օթեակներից մէկում, նայում էի դէպի վերնայարկ։ Բազմաթիւ գլուխների մէջ, վերջապէս, տեսայ Լևոնին։ Արմունկները պատնէշին յենած, գլուխը ափերի մէջ բռնած, աչքերը յառել էր բեմին։ Նրա մի կողմում կանգնած էր բանաստեղծ Զաուշէնկօն, միւս կողմում Իցկօ Մարգուլիսը։ Երբ բեմի վրայ երևաց երգչուհի Բարբինին, Լևոնը գլուխը բարձրացրեց և ամենից առաջ ծափահարեց։ Նրան հետևեցին Զաուշէնկօն և Իցկօն, յետոյ վերնայարկի մի մասը։ Նոյն վայրկեանին մի քանի տասնեակ ձեռներ ձգեցին բեմի վրայ ինչ-որ սպիտակ ու կարմիր ծաղիկներ, նաև զոյնզգոյն բարակ թղթի թերթիկներ։ Գոյացաւ մի ֆանթասթիք անձրև։ Պարտերն ակամայ յափշտակուեց, և ամբողջ հինգ բոպէ թատրոնը թնդում էր բուռն ծափահարութիւններից։ Վերցնելով իւր գլխին տեղացող անձրևից մի կաթիլ՝ մի ծաղիկ, երգչուհին սեղմեց սրտին, անդադար գլուխ տալով աջ ու ձախ, յետոյ աչքերը բարձրացրեց դէպի վերնայարկ և օդային համբոյրներ ուղղեց պատանի երկրպագուներին։ Այս աւելի ոգևորեց նրանց և աւելի զօրացրեց աղաղակներն ու ծափերը։

Լևոնն իւր մարմնի կիսով դուրս էր եկել պատնէշի ետևից։ Կարծես, ձգտում էր ծաղիկների հետ ընկնել երգչուհու ոտների տակ իբրև կենդանի զոհ գեղարուեստի։

Անցաւ առաջին գործողութիւնը, երկրորդը, երրորդը։ Լևոնի ոգևորութիւնը սաստկանում էր երգչուհու աջողութեան հետ զուգընթաց։ Նա մերթ ծափահարում էր, ձեռները գլխից վեր բարձրացրած, մերթ աղաղակում. «Էվի՛վա, բրա՛վա, բրավի՛սիմա»...

Վերջին գործողութեան կիսում Լևոնը յանկարծ չքացաւ Զաուշէնկօի և Իցկօի հետ, մինչև ներկայացման վերջը չերևաց այլ ևս։

Դուրս գալով խուռն բազմութեան հետ փողոց, տեսայ հետևեալը։—Թուով երեսուն-քառասուն ոստիկաններ կազմել էին մի ընդարձակ շրջան՝ հեղեղուած էլէքտրական ահագին լապտերների առատ լուսով։ Թատրոնից դուրս եկողները հաւաքւում էին շրջանի ետևում։ Մուտքի մօտ մի կողմում խմբուած էին հարիւրի չափ համալսարանական ուսանողներ, միւս կողմում կանգնած էին երկու կանոնաւոր շարքերի բաժանուած մի խումբ պատանիներ տասնուհնգից մինչև քսան տարեկան։ Միակ չափահասը նրանց մէջ Զաու-

չէնկօն էր։ Նա ձեռին պահած էր մի թերթ թուղթ։

Ուսանողներից մի տասը հոգի ձեռներում բռնած էին մի-մի փոքրիկ փանջ ծաղիկների, իսկ պատանիները՝ մի-մի վառ կերոն։

Տեսարանը գեղեցիկ էր, հետաքրքրական։ Գիտէի որ Լևոնը յեսին դեր չի կատարում նրա մէջ։ Քաշուեցի մի կողմ և աչքերով որոնցի նրան։ Դժուար չէր գտնելը։ Նա կանգնած էր պատանիների շարքերից մէկի գլխին, ձեռքին մի երկայն ձող, որի ծայրում վառում էր հաստ մոմի կտորը։ Ցուրտ չէր զգում նա առանց վերարկուի, նոյն իսկ առանց կրկնակօշիկների, իւր բարակ պիջակում։ Երևի, չէր զգում, թէև եղանակը բաւական ցուրտ էր։ Նա յափշտակուած էր իւր դերով, աշխատում էր կարգ պահպանել պատանիների շարքում։ Կերոնների հրեղէն լեզուակները ելէքտրական ահագին լապտերների լուսոյ ներքոյ ներկայացնում էին դեղնագոյն աղօտ բծեր՝ տկար, որպէս աստղերը լուսնեակ երեկոյ։

Լևոնի նիհար դէմքը ստացել էր մի տեսակ բաց-մանիշակագոյն երանգ։ Նա յիշեցնում էր դեկադենտ նկարչի քմահաճ վրձինի տաբօրինակ ստեղծագործութիւն։ Սակայն այդ հիւանդոտ դէմքի վրայ աչքերը փայլում էին յղկած պողպատի պէս։ Հորս կողմից ելէքտրա-

կանութեամբ հեղեղուած՝ նրա մարմինը գետնի վրայ չէր ձգում ստուեր. նա ինքը, կարծես, ստուեր լինէր։ Նրա շարժումները արագ էին, ջղաձգական, լի աւիւնով։ Երբ խօսում էր, նոյն իսկ հեռուից ինձ թւում էր, որ խօսում են նրա բոլոր նեարդերը, սրտի բոլոր թելերը։ Ահագին բազմութեան մէջ ձայնն ինձ չէր հասնում, բայց գրազ կըգայի, որ այդ ձայնը դողում էր հոգեկան բարձր հաճոյքից իւր բոլոր ելևէջներով։ Լևոնն երջանիկ էր։

Երբ երգչուհին դուրս եկաւ թատրոնից երկրպագուներով շրջապատուած, Իցկօ Մարդուլիսն ամենից առաջ աղաղակեց. «ուռռա»։ Հաուշէնկօն, գաւազանով յետ մղելով նրան, մօտեցաւ երգչուհուն ու տուեց նրան իւր ձեռքի թուղթը։ Անշուշտ, այդ նրա ոտանաւորն էր, յատկապէս օրուայ առիթով գրուած։

Լևոնը դդակը վերցրեց և օդը գցեց։ Նրա թանձր մազերից երկու շերտ ընկան նուրբ ճակատի վրայ։ Նրա օրինակին հետեւեց պատանիների ամբողջ խումբը։ Երևան եկաւ Հաուշէնկօի նեղ, երկայնաձև գլուխը, հարթ, նօսր մազերով։ Եւ կլսամերկ, կիսաքաղցած պատանիների տհաս ձայները՝ «բրաւվա, բրաւվո սսիմա», խառնուելով միմեանց, կարծես, սառեցին ձմեռային ցուրտ օդում։ Այդ վայրկեանին ես անիծեցի մաքումս երջանիկ երգչուհուն, որ, թէկուզ ակամայ, խելքից հանել էր

այդ մատաղահաս էակներին և վտանգի էր ենթարկում նրանց կեանքը, ով գիտէ, գուցէ և՛ հոգին։ Մի՞թէ, արդարև, գեղարուեստն այնքան անողոք է իւր բարձրութեան վրայ, որ իւր առջև ծունկ է չոքեցնել տալիս նոյն իսկ անմեղութեանը։

Երբ երգչուհին մօտեցաւ թատրոնի առջև սպասող փառայեղ կառքին, մի քանի զոյգ ձեռներ սկսեցին արձակել ձիերը։ Կարծեցի, թէ Լևոնն է սկզբնապատճառն և շտապեցի մտքումս հայհոյել բարեկամիս։ Սակայն ես դեռ լաւ չէի ճանաչում նրան։ Նայեցի՝ շըկար ոչ լծուողների և ոչ լծողների մէջ։ Դըրանք բացառապէս ուսանողներ էին, որոնց թեթեւամտութիւնը, երևի, անասնութեան էր հասնում։

Լևոնի խումբն աջ ու ահեակ ուղեկցում էր կառքին՝ վառ կերոններով։ Երգչուհին մէկ-մէկ ընդունում էր ուսանողներից փնջերը, փետտում ու ծաղիկները սփռում պատանիների վրայ, իսկ ուսանողներին վարձատրում օդային համբոյներով։

Ձեղքելով ամբոխը, ես մօտեցայ բարեկամիս։

—Ա՜խ, դուք էլ այստեղ էք,—գոչեց նա, հևալով,—լսեցի՞ք՝ ինչպէս երգեց, լսեցի՞ք...

—Այո, Լևոն, հիանալի երգեց։ Բայց այդ ուսանողները... Ի՞նչ են անում... Մի՞թէ դու

հաւանում ես այդպիսի ցոյցերը։

—Աստուած մի՛ արասցէ։

—Մենք անասուններ չենք,—ասաց Իցկո Մարգուլիսը։

—Այո, մենք մարդիկ ենք,—գոչեց Զաուշէնկօն վրդովուած.—էյ, պարոնայք ստուդենտներ, մի՞ ձգէք ձեր մունդիրի վարկը. էյ, պարոններ, ամօթ է...

—Մտի՛կ արէք,—գոչեց Լևոնը,—ինքն էլ չի հաւանում, ուզում է իջնել կառքից... Բայց ո՛չ, չի իջնում... Ա՜խ... Վիտեա, Պետրօ, Մերգէլ, Խայս, հանգցրէք կերոնները... Ո՛չ, ո՛չ, սպասեցէք... Նա իջնում է կառքից... Իջաւ, իջաւ... Ձիերը լծում են... Կարի՞ սսիմա, կեցցէ՞ Բաբիլոնի. էվի՞վա, բրա՞վա, բրավի՞սսիմա, առաջ, առաջ...

Եւ, կերոնը բարձրացրած, աղաղակելով, չքացաւ ամբոխի մէջ իւր հրեայ ու յոյն ընկերների հետ... Նրանց հետևեց Զաուշէնկօն, լայն վերարկուի փէշերը օդի մէջ ֆրֆռացնելով պատառոտուած առագաստների պէս...

Ես տուն վերադարձայ ծանր տպաւորութեան տակ։ Այդ գիշեր երազումս տեսայ Լևոնի հօրը։ Թշուա՜ռ վարսավիր։ Նա հարբած, կեղտոտ ու պատառոտուած հագստում շնթրուկել էր թատրոնի մուտքի առջև։ Անցորդները հեգնում ու ծիծաղում էին նրա անյոյս սէրը, որ, ով գիտէ, գուցէ առաջացել էր գեղա-

ռուեստի սիրուց։ Այսպէս էի ես միշտ պատկերացնում վարսավիրին, այսպէս էլ տեսայ նրան երազումս...

Զարթնելով, փափագ զգացի Լեոնին տեսնելու։ Բարձրացայ վերև։ Տանը չէր։ Մայրն ինձ հանդիպեց արտասուքը աչքերին և գանգատուեց, թէ գիշերը տուն է վերադարձել երեք ժամին։ Այսօր զարթնել է թէ չէ, խսկոյն տնից դուրս է եկել։

—Պարոն,—աղերսեց այրին,—դուք կարող էք նրան խելքի բերել։ Նա սիրում է ձեզ, կլսէ ձեր խօսքը։ Նա գնում է հօր ճանապարհով։ Վերջն իրան հարբեցողութեան կը տայ և չան պէս կրթաւալուի փողոցներում։

—Նա այդ չի անիլ, խելօք է։

—Ա՛խ, պարոն, կարծում էք՝ հայրը յիմար էր։ Ո՛չ, նա էլ խելօք էր։ Բայց խելքից հանեցին, օրս սևացրին։ Ամուսնուս ձեռքիցս խլեցին, չեմ ուզում որդուս էլ խլեն... Պարոն, օգնեցէք, ես մայր եմ, հասկանում էք, մայր...

Այո՛, մայր էր այդ կինը, գիտէի, որ սիրում է որդուն ու տանջւում նրա պատճառով։ Այժմ խղճում ու մինչև անգամ ցաւակցում էի նրան. բայց դարձեալ անախորժ էին ինձ համար նրա անվերջ գանգատները, նրա եսամոլ հոգացողութիւնը որդու համար։

Գէսօրից յետոյ կրկին բարձրացայ վերև։

Այս անգամ Լեոնը տանն էր, բայց անկողնում պառկած։ Նրա վտիտ այտերի վրայ նշմարեցի անսովոր կարմրութիւն։ Բռնեցի բազուկը. երակը զարկում էր ուժգին։ Անշուշտ երէկ մրսել էր։ Բայց չէր յանձն առնում հիւանդութիւնը։ Նա ուրախ էր և, օգտուելով մօր բացակայութիւնից, յայտնեց իւր ուրախութեան պատճառը։ Բարձի տակից հանեց մի լուսանկար և, ցոյց տալով, հարցրեց.

—Ճանաչում էք։

Այդ երէկուայ երջանիկ երգչուհու լուսանկարն էր։

«Իմ սիրելի արտիստին», կարդացի լուսանկարի ճակատին։

—Ամենքն էլ ինձ արտիստ են կոչում,—ասաց Լեոնը,—չգիտեմ ինչու։ Այսօր գնացել էի նրան շնորհաւորելու երէկուայ աջողութեան համար... Ծաղիկներ էի տարել։ Հրաւիրեց ներս, կաֆէով հիւրասիրեց։ Բաւական խօսեցինք... հարցնում էր՝ ինչքան եմ վաստակում։ Խարեցի, ասացի՝ հայրս ժառանգութիւն է թողել։ Վախենում էի, որ փող առաջարկի ինձ։ Նա նուիրեց ինձ իւր լուսանկարը։ Ես համբուրեցի նրա ձեռը, նա էլ իմ ճակատը։ Օ՜օ, սինեօր, ես շատ երգչուհիներից ունիմ այդպիսի նուէրներ, ահա, այն այլբոմը լիքն է...

Եւ այս վարձատրութեամբ նա գոհ ու երջանիկ էր։

—Բայց ես մի լուսանկար ունիմ,—շարունակեց նա,—այլևս չեմ պահում։ Մայրը սպառնում է բոլորն այրել, վախենում եմ այս մէկն էլ այրի... իսկոյն ցոյց կըտամ..

Նա բարձրացաւ տեղից, պիջակի գրպանից հանեց մի ծրար, ծրարի միջից թանկագին լուսանկարը։ Ես կարդացի հետևեալ մակագիրը. «Իմ ապագայ երկրպագուին—Լուիզա»։

—Օ՜հ, ճիշդ է, բոլորովին ճիշդ, սինեօր։ Ես նրա ապագայ երկրպագուն կըլինիմ։ Լուիզան փայլուն ապագայ ունի. կըտեսնէք, սինեօր, կըտեսնէք... Բայց այս ինչ է, գլուխս պտտեց, պառկեմ...

Երբ տիկին Ալմաստը—Լեոնի մայրը—ներս մտաւ, խորհուրդ տուեցի բժիշկ հրաւիրել։ Լեոնը գլուխը բարձրացրեց, նստեց անկողնում։ Ի՞նչ բժիշկ, ով է հիւանդ, հարկաւոր չէ բժիշկ... Ես հասկացայ նրա միտքը, վախենում էր, որ բժիշկն արգելի նրան տնից դուրս գալու։

Երեկոյեան եօթ ժամին երրորդ անգամ բարձրացայ վերև և նրան չտեսայ։ Տիկին Ալմաստն ասաց, թէ իմ դուրս գալուց յետոյ թագուն հագնուել է ու փախել...

Անմի՛տ պատանի. նա վտանգի էր ենթարկում իւր կեանքը։ Ես իսկոյն դուրս եկայ փողոց. գիտէի ուր կարող է լինել։ Հանդիպեցի նրան թատրոնի մուտքի առջև։

—Պարոններ, չէ՞ք կամենում պրոգրամ գնել,—դիմում էր նա անցորդներին, առաջարկելով նոյն օրուայ ներկայացման ծրագիրը։

Մարդիկ անցնում էին անտարբեր, անգամ չնայելով նրան, իսկ ոմանք կոպտութեամբ գոռում էին. «գնա՛, կորի՛ր»։ Եւ Լեոնի հպարտ հոգին կրում էր այդ վիրաւորանքները համբերութեամբ։ Իմ սիրտը մորմոքուեց, երբ նայեցի նրա կապտած դէմքին։

—Գնա՛ տուն, գնա՛—խնդրեցի ես,—դու բոլորովին հիւանդ ես...

—Ո՞վ ասաց հիւանդ եմ։ Մայրս։ Նա միշտ կամ իրան է հիւանդ երևակայում կամ ինձ։ Այս երեկոյ նոր օպերա է ներկայացւում, ես տո՛ւն գնամ։ Ո՛չ, սինեօր, ահա՛ իմ տունը...

Նա ցոյց տուեց թատրոնը և ժպտալով հեռացաւ։ Հեռուից լսում էի նրա ձայնը.

—Պարո՛ն, պրոգրամ, պրոգրամ. չէ՞ք կամենում, նոր օպերա է, հետաքրքրական. պրոգրամ, հատը տասը կոպէկ...

Միւս օրն առաւօտեան դարձեալ բարձրացայ վերև և էլի նրան անկողնում տեսայ։ Մի և նոյն տանը բնակւում էր մի հրէայ բժիշկ։ Զտապեցի նրան հրաւիրել։ Քննեց հիւանդին, գրեց ինչ-որ դեղ։ Երկու օր հագիւ

կարողացանք Լևոնին տանը պահել, երկրորդ երեկոյ լաց եղաւ, երբ արդելեցինք թատրոն գնալ։ Բարեբաղդաբար, երրորդ օրը տաքութիւնն անցաւ։

Ձմերային սեզօնը վերջացաւ։ Իմ հարևան արտիստները հէնց մեծ պասի առաջին օրն ուղևորուեցին իրանց հայրենիքը։ Այդ օրը տխուր օր էր ոչ միայն Լևոնի, այլ և ինձ համար. այնքան արդէն վարժուել էի հարևաններիս շրջանին։

Մենք մինչև կայարան ուղեկցեցինք իտալացիներին։ Հրաժեշտ տալիս, Կավալլարօն երեք անգամ բարեկամաբար համբուրուեց Լևոնի հետ...

Հէնց նոյն օրը Լուիզան ինձ ասաց, թէ ինքն էլ ամենաուշը մի ամսից ուղևորուելու է Իտալիա։ Հարցը վճռուած էր. սինեօրա Ստեֆանիան վաղուց էր հաշտուել աղջկանից բաժանուելու մտքի հետ։

Երբ յայտնեցի Լևոնին Լուիզայի ուղևորութեան մօտալուտ ժամանակը, ինձ այնպէս թուաց, որ լուրը նրա վրայ առանձին տպաւորութիւն չգործեց։ Գուցէ այդ նրանից էր, որ նոյն օրերը նա առհասարակ շատ տխուր էր տրամադրուած։ Մեծ պասի առաջին շաբաթն էր, թատրոնները փակ էին։ Լևոնն ամեն օր գնում էր քաղաքային թատրոնի շուրջը գըտնուող գեղեցիկ պարտէզը, նստում այնտեղ ու

նայում հսկայական շինութեանը։ Յետոյ գլուխը կրծքին թեքած, ով գիտէ ինչ խորհրդածութիւնների մէջ, վերադառնում էր տուն։ Նա նորոգել էր տուել մօր ձեռքով լուսամտից փողոց շպրտուած կիթառը, նուագում էր։ Երբեմն գալիս էր ինձ մօտ և իմ առաջարկութեամբ մանդոլինա նուագում։ Մի անգամ թախանձեցի նրան կրկնել «Մադրիդի շրջմոլիկը». մերժեց։

Օպերային փոխարինեց դրաման։ Մեծ պասի առաջին կիրակուց սկսուեցին ներկայացումները։ Լևոնը մնաց իւր դերի մէջ, բայց ոչ նախկին սիրով. դրաման օպերայի չափ չէր սիրում, մանաւանդ որ եկուոր խմբի մէջ չկային գրաւիչ դերեր։ Սակայն պատանուն պաշարել էր ուրիշ տեսակի աշխոյժ, որ ինձ անհանգստացնում էր։ Նա ամեն օր գալիս էր ինձ մօտ, վերցնում մանդոլինան, նստում լուսամտի մօտ, նուագում «Մադրիդի շրջմոլիկը»։ Երբեմն յանկարծ ընդհատում էր նուագումը, մանդոլինան շտապով դնում սեղանիս վրայ ու դուրս վազում։ Նա գնում էր Լուիզայի մօտ, նստում և երկար ու երկար հարց ու փորձ անում առաջիկայ ճամբորդութեան մասին։ Եւ բարեսիրտ Լուիզան երբէք չէր ձանձրանում նրա հարցերից, որովհետև նրա համար հաճելի էր խօսել իւր ապագայի մասին։

—Գիտէք,—դարձաւ ինձ մի անգամ Ռա-

խան,—նա ուղղակի սիրահարուած է Լուիզայի վրայ։ Այո, կարող եմ երդուել, որ սիրահարուած է։

—Զգոյշ եղէք, օրիորդ,—ասացի ես,—Լևոնը կլսի ու կվշտանայ։

Ես յիշեցի Թշուառ վարսավիրին և վախեցայ՝ մի գուցէ որդին ենթարկուի հօր վիճակին։ Բայց, բարեբաղդաբար, Լուիզայի շրջապատողներն աւելի խելացի էին, քան այն երգչուհու շրջանը, որի վրայ սիրահարուած էր եղել վարսավիրը։ Ռափսան խօսք տուեց ինձ այլ ևս չխօսել Լևոնի նուիրական զգացումների մասին...

Հասաւ, վերջապէս, օրիորդի ուղևորութեան օրը։ Մի շաբաթ էր Լևոնն անճանաչելի էր դարձել. նա ուրախ էր ու զուարթ։ Դարձեալ, ինքն էր պատրաստւում ճանապարհորդելու։ Գնում էր, գալիս, խօսում, զուարճախօսում։ Չգիտէր ինչ անէր Լուիզայի սիրտը շահելու համար։ Ուղևորութեան նախընթաց երեկոյ Լուիզան, ցոյց տալով մի արծաթէ գրչակոթ, ասաց.

—Տեսէք ինչ խելագարութիւն է արել ձեր հայրենակիցը։ Չէ՞ որ այս նրա մի շաբաթուայ աշխատանքի վարձն է։

—Նա նուիրել է ձեզ այդ գրիչը, որ նամակներ գրէք իրան,—ասացի ես։

—Այո, և ես կգրեմ նրան։ Խնդրեցի

նրան յետ վերցնել նուէրը, վիրաւորուեց, քիչ մնաց լաց լինի։

Գնացքն ուղևորւում էր առաւօտեան տասը ժամին։ Մենք, սինեօրա Ստեֆանիայի բոլոր կենդանիներս, գնացինք կայարան Լուիզային ճանապարհ դնելու։ Կարծում էի, Լևոնն ամենից առաջ եկած կլինի այնտեղ։ Սակայն նա չկար և չերևաց երկար ժամանակ։ Այս անըսպասելի էր. ինչը կարող էր խանգարել նրան վերջին անգամ տեսնելու Լուիզային։

Սինեօրա Ստեֆանիան ինձ հաղորդեց, թէ Կավալլարօից մի շատ սիրալիր նամակ է ստացել։ Երգիչն ուրախութեամբ յանձն է առնում հոգալ Իտալիայում Լուիզայի մասին, ղեկավարել նրա առաջին քայլերը։

—Նա շատ ազնիւ մարդ է,—աւելացրեց տանտիրուհին ուրախ-ուրախ,—հարազատ եղբօր պէս կընայի Լուիզային։ Ես աղջկանս բաց չէի թողնիլ, եթէ չլինէր Կավալլարօն...

Երբէք Լուիզային այնչափ զուարթ ու զուարճախօս չէի տեսել, որչափ այդ օրը, չնայելով որ մինչև կայարան գնալն երկու անգամ արտասուել էր մօրից բաժանուելու պատճառով։ Մի վայրկեան անգամ չէր հանգստանում, թռչկոտում էր, ինչպէս հօթ տարեկան աղջիկ, քրքջում էր, հրճւում իւր ճամբորդութեամբ։ Ամենքիս հետ կատակներ էր անում և բոլորին խոստանում առանձին-ա-

ռանձին նամակ գրել։ Նա լի էր ապագայի վերաբերմամբ քաղցր յոյսերով և այդ յոյսերը չէր թագցնում մեզանից։ Մի երկու տարուց յետոյ կը վերադառնայ մշակուած, կատարելագործուած ձայնով, կըսկսի երգել օպերայում։ Տեսէք, ի՞նչպիսի աջողութիւն կունենայ, ո՞ր-քան երկրպագուներ։

«Իսկնա՛մ,—անցաւ մտքովս ակամայ,—նրա մասին չե՞ս մտածում»։

—Բայց ո՞ւր է Լեոնը,—հարցրեց Լուիզան յանկարծ, կարծես, գուշակելով իմ միտքը.—ա՜հ, իմացայ ինչո՞ւ համար է ուշանում։ Ռիշիլիէի փողոցով անցնելիս տեսայ նրան ծաղկավաճառի խանութում։ Այդ պատանու սիրտը ովկիանոս է, ընդարձակ... Ահա՛ նա, գալիս է... Տեսէք ինչ է բերում, չէ՞ ասում... Անուղղելի՜...

Ձեղքելով կայարանի ամբոխը, Լեոնը մոտեցաւ մեզ մի գեղեցիկ փունջ ձեռին։ Ձատ վազելուց քրտնել էր ու սաստիկ հեւում էր։ Դիմելով ուղղակի Լուիզային, գդակը վերցրեց և, գլուխ տալով, փունջը ներկայացրեց։

Արդէն լաւ ճանաչելով նրան, ես վախեցայ միայն մի բանից՝ Լուիզայի յանդիմանութիւնից։ Եթէ օրիորդն ամենաթեթև ակնարկ անգամ անէր, թէ այդպիսի մի նուէր բոլորովին չի համապատասխանում Լեոնի աղքատ գրպանին, գիտէի, պիտի չարաչար վիրաւորէր նրան։ Բայց նա նրբազգաց գտնուեց. իսկոյն ըմբռնեց Լեոնի հոգեբանութիւնն և այնպէս յայտնեց իւր շնորհակալութիւնը, այնպէս ժպտաց, հոտ քաշելով փնջից, այնպէս գովեց նուէրը, որ պատանու այտերը կարմրեցին ներքին հաճոյքից։

Այդչափ սրտագէտ չգտնուեց Ռաիսան. նա հարցրեց Լուիզային.

—Կավալլարօն քեզ դիմաւորելո՞ւ է Միլանում։

—Այո՛,—պատասխանեց սինեօրա Ստեֆանիան։

—Մի՞թէ նա այնտեղ է,—հարցրեց Լեոնը յուզուած, դողդոջուն ձայնով։

—Նա եկել է Միլան յատկապէս Լուիզային դիմաւորելու համար,—պատասխանեց սինեօրա Ստեֆանիան մի առանձին հաճոյքով։

Այն հոգեկան հաճոյքը, որ մի ժպտով Լուիզան պատճառել էր Լեոնին, վայրկենաբար չքացաւ, տեղի տալով գաղտնի նախանձի կըրծող կրքին։ Բայց Լեոնը գիտէր զսպել իրան չափահաս տղամարդի պէս։ Նա ասաց.

—Այդ լաւ է։ Սինեօր Կավալլարօն կօգնի սինեօրինա Լուիզային։

Երկրորդ զանգակի միջոցին Լուզան սկսեց վերջին հրաժեշտը տալ։ Նա արաւ աւելի, քան կարելի էր սպասել նոյն իսկ իւր նման մի բարի, հասարակ և պարզասիրտ օրիորդից,

որ վարակուած չէր նախապաշարումներով։ Աղատուելով մօր գրկից, ամենից առաջ Լեոնի ձեռն առաւ և... համբուրուեց նրա հետ պարզ ընկերական կերպով։ Յետոյ, շտապ-շտապ սեղմելով մեր ձեռները, փունջը ձեռին բարձրացաւ կառախումբ։

Ես դիտում էի Լեոնին։ Նա բեռուեալ էր նոյն տեղում, ուր արժանացաւ Լուիզայի հրաժեշտի համբոյրին, և նայում էր այն լուսամուտին, ուր պիտի երևար օրիորդը։ Բնազդաբար բռնեցի նրա թևից և մի փոքր հեռացրի կառախմբից...

Ահա երևաց Լուիզայի զուարթ դէմքը լուսամտից։ Նա օդային համբոյրներ էր ուղարկում մեզ։ Մի քանի րոպէ ևս, և լսուեց երկրորդ զանգակը, ու կառախումբը կամացուկ շարժուեց, այնպէս անաղմուկ, որ, կարծես, նաւ էր լողում։ Այն ժամանակ միայն Լեոնը սթափուեց և, գլխարկը բարձրացնելով, գոչեց իտալերէն.

—Բարի ճանապարհ... Յաջողութիւն... Շուտո՞վ...

Տուն վերադարձանք երկուսս միասին ձիաքարշով։ Ճանապարհին Լեոնը մի բառ անգամ չարտասանեց։ Լուռ էի և ես. չէի կամենում ընդհատել նրա մտքերի թելը։ Թէ նա տանջւում էր՝ այս պարզ էր ինձ համար, թէ նա երջանիկ էր Լուիզայի համբոյրով՝ այս էլ

երևում էր։ Բայց թէ ինչ էր մտածում՝ այս վիմացայ. երևում էր միայն, որ նրան զբաղեցնողը սովորական մի միտք չէ...

Ես հրաւիրեցի նրան սենեակս։ Ինչ-որ պատճառով հրաժարուեց գալ։ Արագ-արագ բարձրանալով վերև, չքացաւ հինգերորդ յարկի բարձրութեան մէջ։

Այդ օրից աւելի քան մի շաբաթ անցաւ, ես նրան չտեսայ։ Ինքը չէր գալիս սենեակս, իսկ ես բարձրանում էի վերև և միայն մօրը հանդիպում։

—Ուշ գիշերին տուն է գալիս սենեակս, երբ ես քնած եմ, առաւօտը գնում է, երբ քնած եմ։ Բայց լաւ որդի է, ամեն օր սեղանի վրայ թողնում է յիսուն կոպէկ ողորմութիւն... անիծուի նա...

—Տիկին,—գոչեցի ես բարկացած, բոլորովին համբերութիւնից դուրս գալով այրու անվերջ անէծքներից,—նա ձեր ծախքը տալիս է, հերիք է, էլ ինչ էք ուզում...

Խեղճ կինն ապշած նայեց երեսիս ու մի քայլ յետ դրեց։ Երևի, շատ էի բարկացած, և նա չէր սպասում իմ կողմից այդչափ կոպտութիւն։ Ես զղջացի. ինչ և լինէր, նա դժբաղդ էր, գոնէ այդպէս էր համարում իրան։

—Հետաքրքրուել էք, արդեօք, ուր է գնում ամեն օր,—հարցրի ես, ձայնս մեղմացնելով։

—Զատ էլ հետաքրքրւում եմ, որ չի ասում։ Դիթառն էլ ամեն օր հետը տանում է։ Բայց ես կիմանամ, ուր է գնում, կիմանամ. չեմ թողնիլ, որ կորչի հոր պէս...

Զարմանալին այն էր, որ թատրոնների շուրջն էլ չէի հանդիպում Լեոնին։ Ես կատարելապէս տխրում էի առանց նրան, մանաւանդ որ սինեօրա Ստեֆանիայի սեղանատունը զըրկուել էր իւր հրապոյրից։ Այնտեղ այլ ևս չէին հնչում Լուիզայի մեղադային ձայնն ու վարակիչ ծիծաղը։ Սինեօրա Ստեֆանիան նրա ուրդևորուելու հէնց երկրորդ օրը դաշնամուրը վերադարձրել էր երաժշտական խանութ, ուսկից վերցրած էր ամսավարձով։ Չկար ոչ նուագող, ոչ երգող, ոչ ծիծաղող։ Ռահսան և ուսանողը մտերմացել էին ու զբաղուած էին իրանց մտերմութեամբ։ Աւարտելով ճաշը, նրանք շտապում էին հեռանալ իրանց սենեակները։

Ես ուրախութեամբ կըտեղափոխուէի մի ուրիշ բնակարան, եթէ չխանգարուէր Ստեֆանիայի դրութիւնը։ Նրա սենեակների մեծ մասը դատարկ էր, եթէ ես էլ դուրս գայի, խեղճ կինը պիտի վնաս կրէր։

Մի անգամ ճաշից յետոյ բոլվարումն էի։ Այստեղից բացւում է Օդեսսայի գեղեցիկ տեսարաններից մինը։ Մօտ երկու հարիւր ոտնաչափ բարձրութիւնից երևում են ամբողջ

նաւահանգիստն ու ծովածոցը իրանց հազարաւոր նաւերով։ Ես վաղուց էի կշտացել այդ տեսարանից։ Նստած ամբոխից հեռու մի առանձնակի նստարանի վրայ, երաժշտութիւն էի լսում։ Ակամայ յիշում էի Լեոնի մանդոլինան, որ տասն օր էր որբացել էր սեղանիս վրայ։ «Ո՞ւր է նա այժմ»,—հարցնում էի ինքս ինձ, և հարցը մնում էր հարց։

—Բոն ժուր, մոսիո,—լսեցի մի թոյլ թոքախտաւոր ձայն։

Գլուխս բարձրացրի և իմ առջև տեսայ Զաուշէնկոյին Իցկո Մարգուլիսի հետ։ Այս հանդիպումն ինձ ուրախացրեց։ Ես սեղմեցի նրանց ձեռքը և խնդոյն հարցրի Լեոնի մասին։

Զաուշէնկոն հաստ գաւազանը բարձրացրեց լայն վերարկուի տակից և, ցոյց տալով նաւահանգիստը, թատրոնական եղանակով ասաց.

—Այնտեղ է։

—Զաուշէնկո, ինչու այսօր ձեերդ տրագիքական են,—ասաց Իցկոն։

—Որովհետև, սիրելի Ջհուդիկս, այնտեղ է կատարւում կեանքի տրագեդիան։ Մարդիկ տանջւում են ու մեռնում խաւարի մէջ։ Գնանք, տար ինձ այնտեղ, Իցկո։ Զաուշէնկոն արիստոկրատ բանաստեղծներից չէ, որոնք խորշում են ամբոխից։ Մաքսիմ Գորկիյի գրածները չես կարդացել, Զաուշէնկոյինը կըկարդաս։

Ութ տարի ուսումնասիրել եմ արճիճային աշխարհը. այժմ ուզում եմ ուսումնասիրել նաւահանգստի ամբոխը։ Գնանք, պարոն,—դարձաւ նա ինձ,—դուք էլ գրող էք, գնանք, մի ամաչէք։

—Գնանք, ուր որ ուզում էք, միայն թէ Լեոնին ցոյց տուէք։

—Իցկօն մեզ կառաջնորդի։ Նա խաւարի ծնունդ է։ Հայրը նաւահանգստում հին լաթեր ու երկաթ է ժողովում, պիտի իմանայ խաւար աշխարհի բոլոր խորշերը իւր ձեռքի ափի պէս։

—Իսկ դու պիտի լուսաւորես այդ խաւար աշխարհը ահա դրանցով,—ասաց Իցկօն, զարկելով բանաստեղծի ձեռքի գրքոյկներին։ —Քանի՞ օրինակ ես վերցրել։ Տա՛ սը։ Կրխարջենք, միամիտ կաց։ Նա՛, չիմբա—չիմբա, չիլալա... Շաուշէնկո, չիլալա՛...

Նա ձախ ոտը բարձրացրեց և, աջ ոտի վրայ ոստոստալով, վազեց առաջ։

Օդեսսայի նաւահանգիստը քաղաքի հետ միացրած է մի հսկայական քարէ սանդուղով, որի բարձրութեան վրայ բուլվարի մէջտեղում կանգնած է քաղաքի հիմնադիր Ռիշիլիէի արձանը, իսկ ստորոտում կառուցուած է մի փոքրիկ եկեղեցի նաւահանգստի բնակչութեան համար։ Մենք իջանք այդ սանդուղով, մտանք մի աղեղնաձև լայն փողոց։ Այդ վերջին փողոցն է դէպի ծովափը, այնուհետև ամբողջ

նաւահանգստի երկայնութեամբ բարձրանում է «Էսթակադան»՝ երկաթուղու բեռնակիր գընացքների համար կառուցուած կամուրջը։ Գիշեր-ցերեկ այս հսկայական կամրջի վրայով սուլելով անցնում են շոգեկառքերը, քարշ տալով վագոնների երկայն շարքերը, իսկ ներքև, բազմաթիւ կամարների տակով անց ու դարձ են անում բեռնակիր սայլեր, նաւաստիներ, բանուորներ։ Այդ մի աղմկալի վայր է, մի բարդ հանգոյց ծովային և ցամաքային կեանքերի միջև։ Շոգենաւերի թանձր ծուխը, նաւաստիների կոչտ ձայները, Էսթակադայի խուլ թնդիւնները գնացքների ծանրութիւնից, կայարաններում կուտուած քարածխի փոշին՝ այս բոլորը ընդհանուր՝ առմամբ անսովոր մարդու վրայ ճնշող տպաւորութիւն են գործում։

Իցկօ Մարգուլիսը մեզ առաջնորդեց քարածխի փոշով ծածկուած փողոցի խորքը։ Երբ եկեղեցուց հեռացանք երկու հարիւր քայլ դէպի աջ, մեր առջև բացուեց օղեսների, ստորին տեսակի թէյատների ու պանդոկների մի ամբողջ աւան։ Այստեղ էր վխտում նաւահանգստի բնակչութեան մեծ մասը։ Պանդոկներից լսւում էին հարմոնիայի և ռուսական ողորմելի «բալալայկա»-ի հնչիւններն ամբոխի աղաղակների, երգերի, գոռում-գոչիւնների, յիշոցների ու անէծքների հետ։ Նրանք, որոնք

ժամանակ ու միջոց ունէին, ուտում, խմում ու հարբում էին պանդոկներում, վայելելով էժանագին հուրիների ընկերութեան հաճոյքը։ Իսկ նրանք, որոնք միմիայն խմելու համար փող ունէին, մտնում էին «Մօնօպոլի» կըպակները։ Այստեղ վերցնելով կնքուած շիշերը՝ դուրս էին գալիս փողոց և բովանդակութիւնը դատարկում իրանց բերանները։ Օդին արգելում է խմել «Մօնօպոլի» կրպակներում, ուստի հարբեցողութիւնը, որ առաջ քիչ թէ շատ ամօթ ունէր և թագնւում էր օղանների պատերի մէջ, այժմ թագաւորում է փողոցում ամենայն համարձակութեամբ։ Եւ ահա նրա ողորմելի զոհերը թաւալուած էին կրպակների առջև, մայթերի վրայ, փողոցի մէջտեղում՝ սայլերի ու կառքերի տակ ջարդուելու վտանգին ենթակայ։

Իցկօն կանգ առաւ մի մեծ պանդոկի առջև, որի դռների ճակատին գրուած էր. «Արքայական Եախտա»։

—Ահա այստեղ է Լեոնը,—ասաց նա.—անցեալ շաբաթ «Ոսկէ խաբիսխումն» էր նուագում։

—Հը՞մ,—արտասանեց Զաուշէնկօն, դառնալով ինձ,—տաանում էք։ Վախենում էք մտնել։ Քաջ եղէք, ձեզ չեն ուտիլ, մեզ նման մարդիկ են...

Նա գաւազանը բարձրացրեց և յաղթական քայլերով մտաւ Իցկօի հետ պանդոկ։ Ես մի քիչ նրանից լաւ էի հագնուած։ «Աղա» չհամարուելու համար, վերարկուիս օձիքը բարձրացրի, գլխարկիս եղրը քաշեցի աչքերիս, յուսալով որ ամենաշատը յոյն որմնադիր կը համարեն ինձ։

Պանդոկը լի էր յաճախորդներով։ Առաջին պահ ոչինչ չկարողացայ որոշել, այնքան մթնոլորտը տոգորուած էր ծխով, փոշով ու կերակուրների շոգիով։ Դժուար էր ընդհանուր աղմուկի, գոռում-գոչիւնների ու հայհոյանքների մէջ մի բան հասկանալ։ Այցելուների մի մասը խմրուել էր բուֆէտի առջև, որ գտնւում էր ուղիղ մուտքի դիմաց։ Մենք հրհրւում էինք այս ու այն կողմ։ Զաուշէնկօի նիհար մարմինը պնդակազմ նաւաստիների ուսերի հարուածներից տաշեղի պէս թռչկոտում էր։ Երբեմն նա իրան դիմող մէջքերին դէմ էր տալիս գաւազանի կոթը, ինքը յետ կանգնում։ Իցկօն, իւր փոքրութեան շնորհով, կատուի ճարպիկութեամբ սլկւում էր առաջ մարդկանց արանքով։ Ես հաղիւ էի կարողանում քիթ ու պռունգս աղատ պահել օդի մէջ անիմաստ շարժուող ձեռների ու արմունկների պատահական հարուածներից։

Մենք անցանք երկու շարք կեղտոտ ու մերկ սենեակների միջով, որոնց շուրջը նստած էին նաւաստիներ և երկաթուղու ծառայող-

ներ։ Մի քիթը ուռած, կարմրած, աչքերի տակերը կապտած կին, ինձ տեսնելով, գոչեց.

—Էյ, բասուրման; արի միասին «տրեպակա» պարենք։

Ես հաղիւ կարողացայ ազատուել նրա սիրալիր թեւերից, որ բացուել էին ինձ գրկելու համար. Զաուշէնկօն, գլուխը փիլիսոփայօրէն շարժելով, արտասանեց.

—Թռչուն, ո՞ւր է քո փետուրը։

—Քեռի Սիդօրի կատուն պոկոտել է,—ասաց Իցկօն, ծիծաղելով։

Քեռի Սիդօրը «Արքայական Եախտայի» տէրն էր, կատուն՝ օղին։

Վերջապէս, հասանք ընդարձակ պանդոկի համեմատաբար մի ապահով անկիւն, ուր մեր կողերը ջարդուելու վտանգից ազատուեցին։ Այստեղ մի երկայն սեղանի քով նստած էին տասնի չափ նաւաստիներ։ Սեղանը ծածկուած էր կեղտոտ ամաններով, հացի կտորներով, ուտելիքների ու ծխախոտի մնացորդներով, դարեջրի և օղու շիշերով ու բաժակներով։

—Ահա և՛ ձեր արտիստը,—ասաց Իցկօն, ցոյց տալով սեղանի ծայրը։

Այնտեղ նստած էր Լեոնը։ Նա կիթառ էր նուագում և զուարճացնում սեղանակիցներին։ Չնայելով իւր չքաւորութեանը, ես մինչև այդ օրը նրան կեղտոտ չէի տեսել։ Գոնէ շապիկը միշտ անարատ էր, ձեռքերն ու երեսը

մաքուր, կօշիկները վաքսած, փայլուն։ Իսկ այժմ նա նմանւում էր զործարանական բանուորի։

Իմ երևալը նրան զարմացրեց։ Նա չընդհատեց նուագումը, բայց չափազանց շփոթուեց, կարմրեց։ Նաւաստիները նրան լսում էին ուշադիր, թէև արդէն բոլորն էլ հարբած էին։ Իրանց հիացմունքն արտայայտում էին գոռում-գոչիւններով։ Երբեմն մէկը կամ միւսը վեր էր կենում, գրկւում ու համբուրւում նրա հետ կամ, մէջքին զարկելով, արտասանում էր.

—Մալադե՛ց, Լեվա, մալադե՛ց...

Զաուշէնկօն մեզ հրաւիրեց նստել մի դատարկ սեղանի քով, ասելով թէ Լեոնին չի կարելի խանգարել, նաւաստիները կըկատաղեն։ Մի շիշ դարեջրի պատրուակով կարելի էր նստել, և մենք նստեցինք։ Լեոնը շարունակ մեզ էր նայում ու ժպտում։ Այդ տասն օրուայ ընթացքում նա աւելի նիհարել էր ու թոշնել։ Առաջին անգամ այդ օրը նրա բերանի անկիւններում նկատեցի թեթև խորշեր։

Սեղանի մօտից վերկացաւ լայն թիկունքով ու մեծ միրուքով մի նաւաստի և օրօրուելով մօտեցաւ Լեոնին։ Ձեռը դնելով պատանու նիհարիկ ուսի վրայ, գոչեց.

—Էյ, ճպուռ, նուագելու՞ ես ինձ համար՝ «Ո՜հ, իմ վիշտ» թէ՞ չէ. ես ուզում եմ՝ «Ո՜հ, իմ վիշտ» լսել։

—Տեղդ նստիր, էյ, Սիբիրի ռելս,—գոչեցին ընկերները,—մի խանգարիր Լեվային։

—Չեմ նստիլ, մինչև որ չլսեմ՝ «Ո՜հ, իմ վիշտ»։ «Ո՜հ, իմ վիշտ»։ Լեվա, Լեվա, «Ո՜հ, իմ վիշտ»։

—Ցիմարի գլուխ,—նկատեց մէկը,—Լեվան հէնց «Ո՜հ, իմ վիշտ» է նուագում։ Չեմ լսում, անո՛ւս...

—Լեվա, սուտ չի՛ ասում։

Լեվան գլխով հաստատեց, թէ նուագածը հէնց «Ո՜հ, իմ վիշտն» է։

—Սատանան տանի,—գոռաց Սիբիրի ռելսը,—ինչ լաւ էիր նուագում։ Լսեցինք, լսեցինք. հիմա նուագիր «Դունայի գեղեցկուհի»։ Լեվա, Լեվա, «Դունայի գեղեցկուհի»։

—Ա՛յ քեզ «Դունայի գեղեցկուհի»,—ասաց մի յաղթանդամ և, ետեւից ձեռները գցելով Սիբիրի ռելսի կռնակի միջով, փորը դէմ տուեց մէջքին, բարձրացրեց ու բերեց, նստեցրեց իւր տեղը։

—Է՜յ դու Կալուգայի արջ, ինչպէս համարձակուեցիր,—գոռաց Սիբիրի ռելսը,—թաթերդ կըփշրեմ...

Եւ բռունցքն այնպիսի ոյժով զարկեց սեղանին, որ շիշերն ու բաժակները միմեանց դիպչելով փշրուեցին։

Բարձրացաւ աղմուկ, վէճ, իրարանցում։ Օդի մէջ երևացին մի քանի սպառնալի

բռունցքներ։ Գուցէ «Սիբիրի ռելսը» և «Կալուգայի արջը» միմեանց քիթ ու պռունգը ջարդէին, եթէ չլինէր մի ալևոր նաւաստի, որին ընկերները «Դեադուշկա» էին անուանում։ Նա մէջ մտաւ նրանց բաժանելու։ Օգնութեան հասաւ Լեոնը։ Նա նուագումը ընդհատեց և, տեղից վերկենալով, ասաց.

—Պարոններ, թոյլ տուէք ինձ գնալ «Խերսօնցիների» մօտ։

Վէճն իսկոյն դադարեց. բոլորը շրջապատեցին երաժշտին։

—Լեվա, աղաւնեակ, մի անիր, Լեվա, հոգեակ, նուագիր. ի՞նչպէս կարելի է,—խնդրեցին բոլորը։

—Նուագի՛ր... ի՞նչպէս նուագեմ, պարոններ, քանի որ չէք լսում, կուում էք անկիրթ «բօսեակների» պէս։ Մի՞թէ վայել է «Ռուսաց ընկերութեան» նաւաստիներին։

—Վայել չէ, ի հարկէ, վայել չէ,—գոչեց «Դեադուշկան»։

—Դուք ինձ «Ցիրասպօլցիների» մօտից բերեցիք այստեղ, որ ձեր կռիւը տեսնեմ։ Դուք լաւ չէք գնահատում երաժշտութիւնը...

«Խերսօն», «Ցիրասպօլ» նաւեր էին, և նաւաստիները կրում էին իրանց նաւերի անունները։

—Կըգնահատենք, կըգնահատենք, Լեվա, յիմարներ չենք...

—Ի՞նչ է, փող է ուզում այդ ճպուռը,—գոչեց Սիբիրի ռեխը և վարտիկի գրպանից հանելով արծաթե դրամներով լի քսակը, գցեց Լևոնի գիրկը,—ահա, վերցրու, խեղդու�իր...

—Մենք էլ կըտանք, մենք էլ կըտանք,—աղաղակեցին ամենքը, ձեռները տանելով իրանց գրպանները։

—Տեսէք, տեսէք, Լևոնը հարստանալու է,—գոչեց Իցկոն, հրճուանքից ձեռները միմեանց զարկելով, երբ տեսաւ փողի քսակները։

—Հապա, կըտեսնենք թէ ինչպէս,—արտասանեց Զաուշէնկոն, որ, արմունկները սեղանին յենած, դիտում էր կատարուող տեսարանը։

Լևոնը հանգիստ վերցրեց իւր գիրքն ընկած քսակները և, դնելով սեղանի վրայ, ասաց.

—Ես իմ գնից մի կոպէկ էլ աւելի չեմ վերցնիլ։ Համարը 10 կոպէկ, ոչ աւելի, ոչ պակաս։ Դրէք ձեր գրպանները, նստեցէք, նուագում եմ...

—Բրա՜վո, Լևոն, բրա՜վո, դու մեր երեսը սև չարիր,—գոչեց Զաուշէնկոն ոգևորուած և նուագողների ուշադրութիւնը գրաւեց մեր վրայ։

—Այդ ի՞նչ կատու է,—գոչեց Սիբիրի ռեխը.—ա՜հ, տիրացո՛ւ։ Հէ՛, ուխտաւոր է, աբեղայ է... Է՛յ, երևի, Իօքազամայի տաճարի համար լումայ ժողովելու ես եկել։ Արի՛, արի՛, մենք էլ կըտանք մեր հոգու փրկութեան համար։

Զաուշէնկոն վերցրեց սեղանի վրայից իւր գրքոյկները և հանդիսաւոր քայլերով մօտեցաւ նուագողներին։

—Պարոններ, ես ոչ տիրացու եմ, ոչ տաճարի համար լումայ ժողովող։ Ես երգիչ եմ...

—Երգիչ, երգիչ, այդ շատ լաւ է,—ասացին ոմանք.—դէհ, երգիր, տեսնենք։

—Երգիր՝ «Ո՜հ, վիշտ»,—պահանջեց Սիբիրի ռեխը,—«Ո՜հ, իմ վիշտ»։

—Ո՜հ, խաւար. ահա իմ վիշտը,—արտասանեց բանաստեղծը։—Պարոններ, ես ձայնով չեմ երգում, այլ գրչով։ Գնեցէք մի-մի օրինակ ահա այս գրքոյկներից։ Դուք, պարոններ, ինչպէս տեսնում եմ, երաժշտութիւնը սիրում էք. մի մոռանաք, որ բանաստեղծութիւնն էլ նրա քոյրն է։

—Քո՞յրն է,—ասաց Սիբիրի ռեխը,—ապա տուր ինձ այդ գեղեցկուհուն...

Նա խլեց գրքոյկներից մէկը, դրեց դատարկ ամանի մէջ, վրան օղի թափեց և, լուցկին վառելով, ասաց.

—Ապա, տեսնենք քոյրն ինչպէս է երգում։

Օղին այնքան թունդ չէր, որ վառուէր։

—Քեռի Սիդօր,—գոչեց Սիբիրի ռեխը,—կատուիդ մագիլները հանել ես... խի-խի-խի՜, սպիտ բեր...

—Է՜յ, Սիբիրի ռեխ,—ասաց «Դեադուշկան»,—այսօր դու մեղ ուղում ես խայտառակել։ Գրքերը սուրբ են, յանցանք է նրանց այրելը... Գնե՞նք մի-մի օրինակ...

Նաւասաները գնեցին մի-մի օրինակ «Վշտի և տանջանքների ժամերից», իսկ անհանգիստ Սիբիրի ռեխը մի մեծ բաժակ օղի ձեռքում մօտեցաւ հեղինակին։

—Կոնծիը, դնչիցդ երևում է, որ սիրում ես...

Զաուշէնկօն խմող չէր։ Երկու ձեռները դէմ տուեց բաժակին, գոչելով.

—Հեռո՜ւ ինձանից համառուսական թոյն...

Այն ժամանակ Սիբիրի ռեխը կպաւ Լևոնին.

—Խմիր, դու մինչև այսօր դեռ չես հաղորդուել... Թէ քրիստոնեայ ես, պիտի խմես...

—Լեվա, Լեվա, մի բաժակ մեր խաթրու,—խնդրեցին միւսները։

Լևոնը հրաժարուեց, ասելով թէ խմելուց յետոյ չի կարող նուագել։ «Դեադուշկան» նրան պաշտպանեց։

Օրն արդէն մթնել էր։ «Դեադուշկան» յայտնեց, թէ շոգենաւ վերադառնալու ժամանակ է։ Խումբը, վճարելով կերած-խմածի գի-

նը նաև Լևոնի վարձը, դուրս եկաւ աղմուկով, գոռում-գոչիւններով, միմեանց բոթելով ու հարուածելով։

Փողոցում Զաուշէնկօի գլուխը պտտեց այնպէս, որ անշուշտ կընկնէր, եթէ չյենուէր պատին։ Խմիչքների հոտն և ծխախոտի ծուխը չշմեցրել էին նրան։ Բայց նա կրկնում էր.

—Շատ ուրախ եմ այստեղ գալուս, շատ ուրախ եմ, ամեն օր պիտի գամ։ Ո՜րքան նիւթ, ո՜րքան նիւթ գրողի համար։

Իցկօն ոստոստում էր Լևոնի շուրջը։ Վերջապէս, ձեռքը գցելով նրա թևին, հարցրեց.

—Այսօր ինձ համար շօկոլադ ես առնելու, թէ ծխախոտ։

—Երկուսն էլ։

—Ֆիա՜մ ֆիա՜մ, ուրեմն այսօր երկու ռուբլուց աւելի ես հաւաքել... Կեցցէ՜ տրիո։ Ես այսօր ոչինչ չեմ վաստակել։ Բանաստեղծ, պիտի ինձ համար մի սրինգ գնես։ Ես էլ ուզում եմ սրինգ նուագել։

—Կըզնեմ, ինչու չեմ գնիլ,—ասաց Զաուշէնկօն բարեսրտաբար։

—Չիմբա—չիմբա —չիլալա, Զաուշէնկօ, չիլալա՜...

Երբ ընկերները բաժանուեցին, ես հետաքրքրուեցի իմանալ՝ ինչու է Լևոնը փոխել իւր արհեստը։ Էի ուզում հաւատալ, որ ա-

ռանց վերին աստիճանի ստիպողական մի պատճառի կարող է նա ցերեկներն անգամ ապրել թատրոնից հեռու:

—Կարիքն է ստիպում, սինեօր,—պատասխանեց նա հանդարտ:

—Բայց չէ՞ որ դու առաջ էլ կարիք ունէիր:

—Ես ուզում եմ մօրս կամքը կատարել:

—Այսինքն:

—Ուզում եմ նրան ապահովել:

Ես նայեցի նրա աչքերի միջին և հասկացայ, որ կեղծում է: Փողոցային լապտերի լոյսը մատնեց նրա այլայլուելը:

—Է՛հ, շատ գովելի է,—ասացի ես,—որ ուզում ես մօրդ ապահովել: Բայց ներե՛ր, Լեւոն, այս անգամ շատ էլ չեմ հաւատում քեզ: Կարծում եմ, ուրիշ նպատակ ունիս:

Նա ոչինչ չասաց, միայն քայլերն արագացրեց:

—Ո՞ւր ես շտապում,—հարցրի ես:

—Թատրոն:

—Է՞լի թատրոն:

—Այո, սինեօր... այսօր լաւ դրամա են ներկայացնում...

Եւ, երևի, իմ հարց ու փորձերից ազատուելու համար, շտապով հեռացաւ: Ես արդէն զուշակել էի նրա միտքը...

Մի քանի անգամ այցելեցի «Աբբայական

Եպիսկոպոս»-ն: Լեւոնին այնտեղ սիրում էին: Նաւաստիները խլում էին նրան միմեանց ձեռքից: Նա գիտէր նուագել մալառօսական եղանակները ու պարերը: Անցնում էր մի խմբից միւսը, բոլորին զուարճացնում, հաւաքելով իւր տասնական կոպէկները: Զուարճութեան տաք միջոցներին սեղանակիցներն երբեմն խնդրում էին նրան խմել մի-մի բաժակ օրի կամ գարեջուր: Նա չէր ուզում խմել և չէր էլ կարողանում խմել:

Մի անգամ իմ ներկայութեամբ, երբ զզուանքով յետ դրեց օղու բաժակը, նրա համար պահանջեցին ինչ-որ քաղցր ըմպելիք: Նա մի բաժակ խմեց, յետոյ երկրորդն և զուարթացաւ...

Ցաւալի էր ինձ համար, որ նա այցելում է այդ ստորին վայրերը: Բայց իրաւունք չէի համարում համոզել նրան թողնելու այդ տեղերը: Ուրիշ ինչ միջոց ունէր նա ապրելու, բացի նախկին ողորմելի պարապմունքից:

Մի օր նա ասաց.

—Սինեօր, երկու ամիս չկայ, արդէն երեսուն ռուբլի եմ յետաձգել: Բայց մօրս չասէք:

—Ինչո՞ւ:

—Որովհետև այդ փողերն ինձ հարկաւոր են..

—Իտալիա գնալու համար,—լրացրի ես

նրա խօսքը, խնդիրը միանգամից պարզելու համար.—մի զարմանար, Լեոն, ես այդ վաղուց գիտէի։

—Օ՜օ, սինեօր, իրաւ է, ես ուզում եմ տեսնել Իտալիան...

—Եւ Լուիզային...

Նա ամօթից երեսը դարձրեց ինձանից։ Ես հաղորդեցի նրան, թէ սինեօրա Ստեֆանիան Կավալլարօից նոր նամակ է ստացել։ Բարիտօնը գրում է, թէ երգեցողութեան ուսուցիչները փորձել են օրիորդի ձայնը և հիացել նրա ուժով ու «տեմբրով»։ Մի յայտնի պրոֆեսսոր խոստանում է երեք տարուայ ընթացքում Լուիզային այնչափ պատրաստել, որ կարողանայ օպերաներում առաջին «դրամատիկ-սոպրանո»-ի դերը երգել։

Հաղորդածս նորութիւն չէր նրա համար։ Նա ասաց, թէ հէնց նոյն օրն ինքը նամակ է ստացել Լուիզայից։ Բարի օրիորդն իւր խոստումը կատարել էր։ Սակայն այդ եղաւ առաջին և վերջին նամակը...

Ամբողջ գարունն և ամառը պատանին այցելեց նաւահանգստի պանդոկները։ Երբեմն գալիս էր սենեակս և ինձ հաշիւ տալիս։ Նրան դեռ սիրում են նաւաստիները, հաճոյքով լսում և միմեանց ձեռքից խլում։ Ամսական միջին թուով քսան ռուբլուց աւելի է յետաձգում։ Շուտով, շուտով կրկատարի իւր փա-

փագը, կուղևորուի Իտալիա...

Այն ինչ՝ պանդոկների մթնոլորտն արդէն դրել էր իւր դրոշմը նրա վրայ։ Ձևերը նկատելու չափ դեհկացել էին։ Ժամանակ առ ժամանակ արտասանում էր տգեղ բառեր, որ առաջ չկային նրա բառարանում։ Արտասանում էր և իսկոյն զղջում, կարմրում։ Մի քանի անգամ զգացի, որ բերանից խմիչքների հոտ է գալիս։ Իսկ մի երեկոյ մեր տան դարպասի առջև տեսայ նրան սաստիկ հարբած դրութեան մէջ։ Կիթառը կռնատակին բռնած, օրօրուելով, տուն էր գրում, մի քայլ առաջ դնելով, մի քայլ կողք, օրօրուելով։ Օգնեցի նրան սանդուղով բարձրանալու։

Ալմաստը տեսաւ նրան թէ չէ՝ ձեռները զարկեց իւր երեսին, գոչելով.

—Սպանեց, մորթեց...

Նախատինքի ժամանակ չէր։ Խնդրեցի վշտացած մօրը զսպել առ այժմ իւր սրտի թոյնը։

Լեոնը թաւալուեց երեսնիվայր անկողնում, մի ոտը թողնելով յատակի վրայ։ Տեսարանը եղկելի էր։ Լեոնը, այն պատանին, որին երևակայութիւնս գրեթէ հրեշտակացրել էր, ընկնում էր աչքումս։ Եւ այս ինձ համար դառն էր, շատ դառն։ Նա ոչինչ չէր զգում, ընկած էր կեղտոտ լաթի պէս, ոտից մինչև գլուխ ցեխոտ։ Միայն երբեմն ձեռը դուրս էր

բերում փորի տակից և շոշափում ձախ կոշիկը...

Ես թողեցի տխուր տեսարանն և հեռացայ։ Մթթէ այս է բարեկամիս վերջը։ Մթթէ Ալմաստի շար գուշակութիւնն իրագործւում է։

Առաւօտն երբ բարձրացայ վերև, Ալմաստը արդէն թեթևացրել էր իւր սիրան և աչքունքը կիտած լուռ նստած էր մի անկիւնում։ Լևոնը փնտռում էր կիթառը, որ գնայ իւր գործին, չէր գտնում։ Ալմաստը թաղցրել էր, չէր ուզում տալ։ Տեսնելով ինձ, խեղճ կինը լաց եղաւ։ Այս անգամ խօսքերը չգտայ Լևոնին արդարացնելու։

—Չէի՞ ասում, որ վերջն իւր անիծուած հօր օրին է հասնելու։ Ահա՛ չորրորդ անգամն է տուն է գալիս չան օրում...

Ես բարեւոք համարեցի Լևոնի հետ խօսել առանձին, հրաւիրելով սենեակս։ Ցիշում էր երէկուայ իւր խայտառակ դրութիւնն և սաստիկ ամաչում։ Լուռ էր, սպասում էր, որ ես խօսեմ։ Ի՞նչ պիտի ասէի. նախատելը կըլինէր աւելորդ. Լևոնը յիմար գլուխ չէր և ոչ էլ երեխայ. շուտով պիտի լրանար տասնութ տարին։ Ես ընկերաբար բացատրեցի հարբեցողութեան կորստաբեր հետևանքները։ Նա լսեց մինչև վերջը համբերութեամբ և, երբ վերջացրի, ասաց.

—Այդ բոլորը գիտեմ. հայրս հէնց հարբեցողութիւնից մեռաւ։

—Գիտես և էլի խմում ես։

—Ստիպում են։

—Ովքե՞ր։

—Նաւաստիները։

—Տեղափոխուիր ուրիշ պանդոկ։

—Ամեն տեղ ստիպում են։

—Մթթէ չես կարող մերժել։

—Առաջ մերժում էի, հիմա չեն թողնում։

—Ի՞նչ ասել է չեն թողնում. ամեն մարդ իւր կամքի տէրն է։

—Այո՛, սինեօր, բայց երբ կէս փթանոց բռունցքը պահում են քթիդ տակ, մոռանում ես կամքդ։

—Խօմ նրանք քեզ չեն ծեծում։

—Կըծեծեն, եթէ շատ յամառութիւն անեմ։

—Բայց ի՞նչ օգուտ ունին քեզ հարբեցնելուց։

—Հարբածներն ատում են արթուն մարդուն։ Երբ չեմ խմում, ասում են՝ «դու մրաքումդ ծաղրում ես մեզ։ Դու էլ խմիր, հաւասարուիր մեզ հետ»։

—Դոնէ քիչ խմիր։

—Ճատ չեմ խմում, բայց քիչն էլ ինձ հարբեցնում է։

—Ի՞նչ են խմեցնում։

—Առաջ քաղցր խմիչքներ էին տալիս։

հիմա ասում են՝ «Թանկ է նստում» և ստիպում են խմել գալեջուր էլ, օդի էլ...

Ես լռեցի։ Բայց հարկաւոր էր մի հետաքանքի հասցնել մեր խօսակցութիւնը։

—Լեոն, թող այդ պանդոկները, էլի թատրոններով զբաղուիր...

—Ի հարկէ, թողնելու եմ, սինեօր, շուտով, շուտով կըգնամ Իտալիա... Արդէն հարիւր յիսուն ռուբլի ունիմ։

—Իսկ մնայդ։

—Նրան էլ հետս տանելու եմ։

—Հարիւր յիսուն ռուբլով։

—Ի՞նչ կայ, քիչ է։ Ես շատերից եմ հարցրել։ Ասում են՝ ամսական երեսուն ռուբլով կարող ենք ապրել այնպէս, ինչպէս այստեղ։

—Գուցէ կարելի է, բայց մի քանի ամիս, իսկ յետոյ։

—Յետոյ... մի գործ կըգտնեմ։

—Լեոն, ճշմարիտն ասա, ինչն է քեզ ստիպում Իտալիա գնալ,—հարցրի ես, նայելով ուղիղ նրա աչքերի միջին։

—Ուզում եմ վիոլոնչէլը նուագելը սովորել ու գալ այստեղի օրկեստրը մտնել։

«Կեղծում ես, բարեկամս,—մտածեցի ես,—այդ չէ գլխաւոր պատճառը»։

Նայեցի նրան ուշադիր, սիրտս մսլմսքուեց։ Նա ոտքի վրայ ցամաքել էր, ինչպէս

արմատից վնասուած ծաղիկ։ Խնդրեց ինձ համոզել մօրը, որ կիթառը տայ իրան։ Միևնոյն է, եթէ չտայ, պիտի նորը գնել. ինչու աւելորդ ծախսի մէջ ընկնել։

Հազիւ այդ օրից անցել էր մի շաբաթ, երբ մի երեկոյ, մօտ տասը ժամին, յանկարծ սենեակս մտաւ Ալմաստը շփոթուած։

—Պարոն, նեղութիւն քաշեցէք, վերև բարձրացէք Աստուծոյ սիրոյն։

Տարօրինակ դրութեան մէջ տեսայ ես Լեոնին այդ երեկոյ։ Հեզ պատանին կատաղելապէս կատաղել էր։ Առանց բաճկոնի ու կօշիկների թաւալուել էր դռների առջև և մռնչում էր ինչպէս մատաղ գազան, կրծոտելով իւր ձեռների միսը։ Նրա նիհար պարանոցի երակներն ուռել, փքուել էին, կարծես, ահա, ահա պիտի տրաքուին ձգուած լարերի պէս։ Նա ոտները զարկում էր յատակին ինչպէս դիւահար։

Գատահել էր մի շատ սովորական դէպք, որի նմանները պատահում էին Օդեսայի խուլ անկիւններում գրեթէ ամեն երեկոյ։ Նաւահանգստից վերադառնալիս Լեոնի վրայ յարձակուել են ինչ-որ քաղցած սրիկաներ, խլել ձեռքից կիթառը, հանել բաճկոնն ու կօշիկները և բաց թողել։

—Եւ դրա համար քեզ սպանում ես,—գոչեցի ես, բռնելով Լեոնի թեը,—ամօ՛թ։

—Ես էլ այդ եմ ասում, որդի, խօմ չեմ նախատում։ Տանը մի հատ պիջակ էլ ունիս, կօշիկներ էլ... Վայ, Տէր Աստուած, ինչպէս է գլուխը պատին խփում։ Այս ի՞նչ պատիժ է, Երկնային Թագաւոր...

Կատկածելի էր, որ Լեոնը կիթառի, մանաւանդ ողորմելի պիջակի ու կօշիկների համար այդպիսի հեծ ու կոծ բարձրացնէր։ Անշուշտ կորուստն աւելի մեծ էր։ Խնդրեցի Ալմաստին մի քանի ռոպէ թողնել մեզ առանձին։ Այրին դուրս գնաց։ Ճանաչելով Լեոնի բնաւորութիւնը, գիտէի ինչպէս պիտի խօսել այսպիսի հանգամանքներում նրա հետ։ Նա սիրում էր զգալ, որ մարդիկ իրան չափահաս են համարում։

—Ամօթ է, Լեոն։ Փառք Աստուծու, դու երեխայ չես, խելքի եկ... Չարժէ այդպէս գոռալ...

—Չարժէ, չարժէ, սինեօր, դուք էլ էք ասում։ Բայց չգիտէք ինչ եմ կորցրել, ի՞նչ։ Չախ կօշիկս... այո՛... ձախը... Գիտէ՞ք... Իտալիա, վիօլոնչել, երգ, երաժշտութիւն, կորաւ ամեն ինչ... բուլվարի ներքևումն էր, այն մեծ սանդուղի մօտ։ Երկու հոգի էին՝ մէկը բարձրահասակ, միւսը թիկնաւէտ։ Բարձրահասակը բռնեց ետևից ձեռներս, միւսը խուզարկեց գրպաններս։ Երբ մի ռուբլուց աւելի չըգտան՝ բարկացան։ Կարծում էի կիթառս կը-

ելին կըհեռանան։ Հեղա՛։ Պիջակս էլ հանեցին... Տէրը նրանց հետ, թող շապիկս էլ հանէին՝ չէի խօսիլ... Բայց կօշիկներս, ձախ կօշիկս... «Հանիր,—ասաց ձեռներս բռնողը,—գոնէ երկու բաժակ օղի արժէն»։ Երբ թիկնաւէտը կռացաւ կօշիկներս հանելու, կատաղեցի, սկսեցի կծոտել նրա ուսերը, գլուխը... Նա ինձ ապտակեց։ Աչքերս մթնեցին... Սկսեցի աղաչել, պաղատել... Շլսեցին անաստուածները... Տարան, տարան...

—Ուրեմն կօշիկներիդ համար ես լալիս,—ասացի ես, մօտաւորապէս հասկանալով բանի էութիւնը...

—Հարիւր յիսուն ռուբլի, սինեօր, հարիւր յիսուն ռուբլի կար կօշկիս մէջ, ձախ կօշկիս... Այնտեղ էի պահում հաւաքած փողերս...

Եւ նա սկսեց դառնագին հեկեկալ...

Այսպէս, ուրեմն, տարել էին նրա վեցհօթ ամսուայ աշխատանքի վարձը. նրա Իտալիա գնալու, Լուիզային տեսնելու յոյսը... Նա աւելի ապահով տեղ չէր գտել իւր փողերի համար։ Տանը պահել վախեցել էր։ Մայրը կըզտնէր, չէր վերադարձնիլ։ Այդ կինը ամեն առաւօտ որդու գրպանները խուզարկում էր, մօտը փող չէր թողնում։

—Փաթաթել էի թղթում, դրել կրունկիս կողմում, վրէն կաշի խփել, ծայրերը դա-

մել... Շատ գիշերներ կոշիկներով եմ քնել... Տարա՞ն սրիկաները։ Ով գիտէ, հիմա ծախում են մի բաժակ օղով կամ մի ֆունտ հացով... Տէ՛ր Աստուած, Տէր Աստուած, ինչ պիտի անեմ...

Ես խօսքեր չէի գտնում թշուառին մխիթարելու։ Խստութիւն համարեցի նախատել նրան իւր անզգուշութեան համար։ Հարկաւոր էր միայն ցոյց տալ կորուստը գտնելու դէթ մի թոյլ յոյս։ Արդէն վիշտը շատ մեծ էր։

—Աա՛,—գոչեց նա յանկարծ, ձեռը զարկելով ճակատին,—յոյս կայ, կայ յոյս գտնելու։

—Այո՛,—ուրախացայ ես երևայի պէս։

—Այո՛, սինեօր։ Դուք ճանաչո՞ւմ էք Իցկօի հօրը։ «Մօշկա սելեօդկա» են կոչում նրան։ Ճարպիկ մարդ է, ճանաչում է փողոցի սրիկաներին։ Հին հագուստեղէն ու կօշիկներ է գնում վաճառում։ Ա՛հ, իսկոյն կըգնամ նրա մօտ. իսկոյն։ Մամա, մամա, ներս եկ, տուր ինձ միւս կօշիկս, պիջակս, գնում եմ կիթառս փնտռելու...

Հակառակ մօր կամքին, նա շուտով հագնուեց ու վազեց դուրս։

Ես, ի հարկէ, Ալմաստին չյայտնեցի, թէ Լեոնն ինչ է կորցրել։ Երևակայում էի ինչ ողբ պիտի բարձրացնէր և որքան անիծէր որդուն։

Վերադարձայ սենեակս, հոգով նախանձելով հարուստներին։ Ինչո՞ւ ես էլ հարուստ չէի...

Լոյսը նոր բացուած գնացի Լեոնին տեսնելու։ Արդէն դուրս էր եկել տնից։ Ամբողջ գիշեր, Ալմաստի ասելով, չէր քնել, պտտել էր անկիւնից անկիւն։ Ուշ երեկոյ էր, երբ Լեոնը մտաւ սենեակս յոգնած, քրտնած, փոշոտ։ Նա խօսելու անգամ ոյժ չունէր։ Մինչև կէսօր թափառել էր Իցկօի հօր, իսկ կէսօրից յետոյ՝ Զաուշէնկօի ու Իցկօի հօր հետ։ Եղել էին գրեթէ բոլոր այն շուկաներում, ուր հին հագուստեղէնի առուտուր է կատարւում։ Քընտռել էին միայն կօշիկները, առանց ում և է ասելու ինչ գանձ են փնտռում։ Եւ զո՞ւր։ Իցկօի հայրը խորհուրդ էր տուել Լեոնին «մոռանալ, թէ երբ և է փող է ունեցել»։ Զաուշէնկօն յայտնել էր ոստիկանութեանը։ Պրիստաւը ծաղրել էր. «ո՞ր յիմարն է կօշկի մէջ փող պահում։

Լեոնն ամբողջ օրն անց էր կացրել անօթի։ Առաջարկեցի ընթրել ինձ հետ, մերժեց. դուրս եկաւ ուժասպառ, յուսահատուած, հարբածի պէս օրօրուելով։

Միւս օրն ես նրան հանդիպեցի փողոցում մի փոքրահասակ, նիհար, կեղտոտ հրէայի հետ խօսելիս։ Դա ինքը «Մօշկա սելեօդկան» էր, Իցկօի հայրը։

—Մօսեօ,—դարձաւ նա ինձ, երբ իմացաւ, որ Լեոնի բարեկամն եմ,—միրուքս վկայ, աղքատն երբէք չպիտի փող ունենայ։ Փողը շատ գոռոզ է, սիրում է թանկագին պալատ-

նել։ Յիմար աղքատը կարծում է, թէ կարելի է նրան պահել գարշապարի տակ, կոշիկում, խի-խի-խի՜... Մանուկ, դու պիտի կուրծքդ պատռէիր ու ասէիր այդ հարիւրանոցին. «պատուէր, սիրելի, համեցէք, այ քո բնակարանը»։ Երանի եմ տալիս այն հնավաճառին, որ այդ կոշիկը կըգնի։ Երդւում եմ միրուքովս, Սողոմոն արքան էլ այնպիսի թանկագին կոշիկներ չի հագել։

Մի շաբաթ շարունակ Լեոնը վաղ առաւօտից սկսած մինչև ուշ երեկոյ փնտռում էր իւր կորուստը։ Զաուշէնկօն և Իցկօն յուսահատուել էին, այլ ևս չէին օգնում նրան, իսկ նա դեռ փնտռում էր։ Նա զրկուել էր քնից, հանգստութիւնից, ախորժակից։ Տուն էր վերադառնում երեկոները, պառկում հագստով անկողնում, հեկեկում ու հեկեկում։ Ալմաստը յուսահատութիւնից չգիտէր ինչ անէր, տանջւում էր որդու հետ հաւասար։ Նա պնդում էր, թէ Լեոնը կրխելագարուի, եթէ այդ դրութեան մէջ մնայ։ Ամեն ինչ մոռացել է, ոչնչով չի հետաքրքրւում, նոյն իսկ թատրոններով։

Խոստովանում եմ, ես այլ ևս քաջութիւն չունէի Լեոնի վիշտը տեսնելու։ Նրա ծանր հառաչանքները, ողբը, հեծկլտանքը կտրատում էին սիրտս։ Այն ինչ՝ այժմ նա աւելի յաճախ էր այցելում ինձ, քան առաջ։ Գալիս էր նստում սեղանիս քով և խօսում իւր կորստի

մասին։ Նա դեռ պահում էր իւր սրտում մի թոյլ յոյս փողերը գտնելու։ Ով գիտէ, անկարելի ոչինչ չկայ. կարող են այդ կոշիկները պատել ամբողջ քաղաքը և դարձեալ յետ գալ, իրանց տիրոջ ձեռքն ընկնել... Բայց շուտով այդ թոյլ յոյսն էլ մեռաւ նրա մէջ, և Լեոնի միտքը սկսեց փոքր առ փոքր սթափուել։ Ծանօթ նաւաստիները խնդրում էին նրան շարունակել յաճախել պանդոկները, խոստանալով նրա համար նոր կիթառ գնել։ Ես խորհուրդ տուեցի նրան ընդունել այդ առաջարկութիւնը և նորից սկսել փող ժողովել։ Մի օր, վերջապէս, նա գնաց «Արքայական եախտա» մի նոր կիթառ ձեռին։ Երեկոյեան նա պատմեց ինձ, թէ նաւաստիները ինչպիսի ուրախութեամբ են ընդունել նրան, ինչպէս գրկուել ու համբուրուել նրա հետ։ Նրա բերանից դարձեալ օղու հոտ էր գալիս։ Երևի, այս անգամ խմել էր վիշտը մոռացութեան տալու համար. ես քաջութիւն չունեցայ նրան յանդիմանելու։

Մի շնչին դումար, որ կարողացաւ նա խնայել առաջին ամիսը, նորից վերակենդանացրեց նրա յոյսերը։ Այս անգամ նա անկեղծ խոստովանեց ինձ, որ Իտալիա գնալու գլխաւոր նպատակը Լուիզային տեսնելն է։ Գրեթէ օր չէր անցնում, որ նա չհարցնէր.

—Սինեօր, ինչ լուր կայ Լուիզայից։

Նա ինքն ամաչում էր անմիջապէս սինեօրա Ստեֆանիային դիմել այս հարցով։ Ես

հաղորդում էի նրան բոլորը, ինչ որ լսում էի տանտիրուհուցս։ Միշտ Լուիզան բարև էր ուղարկում Լևոնին։ Եւ Լևոնը երջանիկ էր այդ ուշադրութեամբ։ Զգիտեմ, կա՞ր, արդեօք, մի ուրիշը, որ այնքան ուրախանար Լուիզայի ամեն մի նոր յաջողութեան համար, որքան այդ սիրահարը։ Նա ասում էր, թէ ամենից աւելի ինքն է սիրում Լուիզային և ամենից առաջ էլ ինքն է ուզում ծափահարել նրան բեմի վրայ. ոչ այստեղ՝ Օդեսսայում, այլ այնտեղ՝ Իտալիայում։

Մի անգամ նա ասաց.

—Եթէ մինչև առաջիկայ գարուն չկարողանամ ճանապարհ ընկնել՝ կընկճուեմ։

Մի ուրիշ անգամ դիմեց ինձ այս հարցով.

—Ի՞նչ էք կարծում, սինեօր, Լուիզան, նշանաւոր երգչուհի դառնալով, կըզոռոզանա՞յ։

Հասկացայ, թէ իսկապէս ինչ է ուզում իմանալ։ Հոգու խորքում նա ինքն իրան արժանի չէր համարում Լուիզային, բայց հպարտութիւնը չէր թոյլ տալիս նրան խոստովանել այդ։ Նա ուզում էր իմ միաբն իմանալ՝ արժանի՞ եմ համարում իրան Լուիզային թէ՞ ոչ։

Կամենալով գէթ մի փոքր սթափեցնել այդ՝ օրից օր աւելի ու աւելի կուրացող հոգին, պատասխանեցի.

—Այո՛, կըզոռոզանայ։ Նա հէնց այժմ էլ, երբ դեռ շատ հեռու է նշանաւոր երգչուհի համարուելու պատուից, զոռոզացել է...

—Ո՞վ ասաց,—գոչեց Լևոնը վշտացած։

—Նրա վարմունքը։ Նա քեզ մոռացել է։

—Ի՞նչ։ Ինչո՞ւ. նա միշտ բարևներ է ուղարկում, խօսք ինքներդ էք ասում։

—Այո՛, բարեկամս, ուղարկում է. բայց, ներե՛ր, այդ բարևների նպատակն ես ուրիշ կերպ եմ հասկանում։ Լուիզան, դեռ երգչուհի չդարձած, արտիստների խորամանկութիւնն է իւրացնում։ Ես ճանաչում եմ նոյն իսկ տաղանդաւոր երգչուհիներ ու դերասանուհիներ, որոնք շողոքորթում են համալսարանական քաղաքներում ուսանողներին, գաւառական քաղաքներում՝ գիմնազիստներին միմիայն նրանց ցոյցերին արժանանալու համար։ Իսկ դու քո խմբով աւելի գեղեցիկ ցոյցեր գիտես անել։ Լուիզան այս գիտէ և քեզ հետ հեռաւոր բարեկամութիւն է պահպանում իւր ապագայի համար, թէև գիտէ, միևնոյն ժամանակ, որ դու կաշառուող չես։ Ա՛խ, բարեկամս, մի յափշտակուիր այն ուսանողի պէս, յիշո՞ւմ ես, որ անցեալ տարի ինքնասպանութիւն գործեց մի երգչուհու պատճառով։ Լուիզան քեզ չի սիրում, եթէ սիրէր՝ նամակ կըգրէր։ Ինչո՞ւ մէկը գրեց ու լռեց։

Գուցէ ես զրպարտում էի Լուիզային, բայց առածիս մէջ զգում էի ճշմարտութեան մաս։ Լևոնին փրկելու համար պատրաստ էի աւելի վատ գոյներով պատկերացնել Լուիզային նրա առջև։

—Նա ժամանակ չունի ինձ նամակ գրելու, զբաղուած է.—ասաց Լևոնը ոչ այնքան Լուիզային արդարացնելու, որքան իւր անձնա-

սիրութիւնը պաշտպանելու մտքով։

—Գուցէ... թող այդպէս լինի...,—ասացի ես անորոշ եղանակով Լեոնին աւելի չվշտացնելու համար։

Ոչքան յիշում եմ, հէնց այդ օրն էր, որ սինեօր Ստեֆանիան մտաւ սենեակս անսովոր ուրախ տրամադրութեան մէջ և ասաց.

—Սինեօր, հիմա կարող էք ինձ շնորհաւորել։

—Ի՞նչ է պատահել...

—Պատահել է այն, ինչ որ վաղուց սպասում էի անհամբեր։ Լուիզան երէկ պսակուել է Կավալլարօի հետ... հէնց այս բոպէիս հեռագիր ստացայ... ահա...

Եւ նա ծոցից հանելով հեռագիրը՝ ցոյց տուեց ինձ։

—Այդպէս անսպասելի՞,—զոչեցի ես, թէև վաղուց մի ներքին ձայն ինձ ասում էր, թէ կայ ինչ-որ մտերմութիւն Լուիզայի և Կավալլարօի միջև։

—Անսպասելի չէր, սինեօր, ոչ, այդ դուք չգիտէիք, իսկ ես գիտէի, որ նրանք նշանուած են վաղուց։ Նշանուելն ինձ համար կարևոր չէր, պսակուելն է կարևոր։ Ես լռում էի, վախենալով որ գործը չփչանայ։ Ա՜խ, վերջապէս ոչքան ուրախ, ոչքան ուրախ եմ։ Կավալլարօն հէնց իմ ուզած փեսան է՝ բարի, քաղաքավարի, լաւ երգիչ, լաւ էլ փող է ստանում։ Այո՛, Լուիզան աւելի լաւ ընտրութիւն անել չէր կա-

ղող։ Երէկ պսակուել են, այսօր պիտի ուղևորուեն Պարիզ։ Կավալլարօն պիտի մի տարի մնայ այնտեղ։ Լուիզան, ի հարկէ, նրա հետ կըլինի...

Ես շնորհաւորեցի երջանիկ մօրը. բայց մի ներքին ձայն չշնչաց, թէ շատ էլ անկեղծ չեմ վարւում։ Ի՞նչպէս կընդունի այդ լուրը Լեոնը, որին սիրում եմ աւելի քան Կավալլարօին ու Լուիզային։

Այդ օրն ես վերադարձայ դրսից տուն ուշ գիշերին, որպէս զի չհանդիպեմ Լեոնին։ Սակայն հետևեալ օրը նա եկաւ սենեակս երեկոյեան սովորական ժամից առաջ։ Սինեօր Ստեֆանիան ճաշի միջոցին ինձ ցոյց էր տուել երկրորդ հեռագիրը, որով յայտնւում էր, թէ նորապսակներն արդէն ուղևորուել են Պարիզ։

Տխուր, անմոռանալի երեկոյ. առաջին անգամ կողոպտուելուց յետոյ Լեոնի դէմքի վրայ տեսայ այդ երեկոյ ուրախ ժպիտ։ Նա իսկոյն պատմեց իւր ուրախութեան պատճառը։ Երկու օր է նրան կանչում են «Խերսօն» շոգենաւը։ Այնտեղ նա նուագում է նաւապետի և իւր օգնականների համար։ Այսօր օգնականներից մէկը, տալով նրան իւր մանդոլինան, առաջարկել է նուագել։ Լեոնը կատարել է նրա ցանկութիւնը։ Նաւապետին առանձնապէս դուր է եկել «Մադրիդի շրջմոլիկը»։ Նա մի շատ բարի մարդ է. իմանալով որ Լեոնը ձըգտում է գնալ Իտալիա, այսօր խոստացաւ օգնել նրան։ Երկու օրից յետոյ «Խերսօնը» գնում

է Կռոնշտադ։ Այնտեղից յետ է գալու և ուղևորուելու է Միջերկրական ծովը, յետոյ Հեռաւոր Արևելք։ Ահա այդ ժամանակ նա կըվերցնի Լեոնին իւր մօր հետ և կտանի մինչև Իտալիայի սահմանները...

—Օ՜. սինեօր, սինեօր, այնքան ուրախ եմ, որ ուզում եմ թռչկոտել։ Ես նաւապետի պարտքի տակ չեմ մնալ։ Կընուագեմ նրա համար ամբողջ ճանապարհին, գիշեր-ցերեկ կընուագեմ։ Իտալիա, Իտալիա, անպատճառ պիտի տեսնեմ։ Որքան կըզարմանայ Լուիզան ու ինչպէս կուրախանայ...

Ծանր էր ինձ համար այս անկեղծ խօսքերից յետոյ թագցնել իրողութիւնը Լեոնից, որ այդ պահին մարմնացած ոգևորութիւն էր։

—Լեոն,—ասացի,—շատ ես փափագում տեսնել Լուիզային։

—Այո, ի հարկէ։

—Եթէ չտեսնես, շատ կըտխրես։

—Բայց ես կըտեսնեմ նրան, սինեօր, կըտեսնեմ Միլանում,—գոչեց Լեոնը հաւատով լի, միևնոյն ժամանակ, մի տեսակ երկիւղով նայելով երեսիս։

—Լուիզան այժմ Միլանում չէ։

—Ո՞վ ասաց։

—Սինեօրա Ստեֆանիայի հեռագիրը։

—Բաս ո՞րտեղ է։

—Պարիզում։

—Ո՞ւմ հետ...

—Կավալլարօ...

—Կավալլարօ,—գոչեց պատանին զրկեթէ շնչասպառ։

—Ամուսնացել է Լուիզայի հետ և երէկ ուղևորուել Պարիզ մի տարի ժամանակով,—ասացի ես միանգամից սրտիս ծանրութիւնից ազատուելու համար։

Լեոնը ցնցուեց, երեսի մկանունքները դողացին։ Մի վայրկեանում կարմրեց, կապտեց, յետոյ սպրդնեց կտաւի պէս։

—Տեսա՞ր, որ քեզ չի սիրում Լուիզան, որ դու երազի սէջ ես...

Լեոնը ճիգն արաւ զսպել յուզմունքը։ Այդ տասնուվեց տարեկան պատանին, որի զգացումներն այնքան անժամանակ հասունացել էին, ունէր նաև կամքի ոյժ։ Սակայն հարուածն աւելի զօրեղ էր։ Նա թուլացած ընկղմուեց աթոռի վրայ, արտասանելով.

—Ա՛յ նորութիւն.. պէտք է շնորհաւորել...

—Այո, պէտք է շնորհաւորել,—կրկնեցի ես, ձեւացնելով իբր թէ չեմ նկատում նրա յուզմունքը։

—Կավալլարօն լաւ մարդ է, ազնիւ է,—ասաց նա դողդոջուն ձայնով, շրթունքները կրծոտելով։

—Այնքան ազնիւ, որ Լուիզան չարժէ նրան։

—Սինեօր...

—Չարժէ, չարժէ,—կրկնեցի ես, վրդովուելով անմեղ խաղուհու դէմ։

—Լուիզան բարձր է... Լուիզան... հրեշտակ է...

Այլևս նա չկարողացաւ իրան պահել, գլուխը դրեց սեղանին ու սկսեց հեկեկալ այնպէս ուժգին, որ թւում էր, թէ նրա մարմինը կտոր-կտոր է լինում։

Ես զգացի անզուսպ ատելութիւն դէպի Լուիզան. կարծես, նա ինձ հասցրել էր բարոյական ծանր վիրաւորանք։ Սկսեցի անխնայ և միանգամայն անարդար պախարակել սի էակի, որ իսկապէս արժանի էր սիրոյ և յարգանքի։ Նկարագրեցի նրա աննշան թերութիւնները խոշորացոյցով մեծացրած, հնարեցի չեղած թերութիւններ։ Լսելով ինձ, կարելի էր կարծել, թէ չկայ աշխարհի երեսին և չի եղել աւելի անբարտաւան, աւելի յիմար և նոյն իսկ աւելի ագեղ ու հակակրելի աղջիկ, քան Լուիզան։ Եւ այս բոլորը՝ Լեոնին հիասթափեցնելու համար։ Ես ջախջախում էի նրա կուռքը, ձգում նրա ոտների տակ, որպէս զի ոչնչացնեմ նրա սրտում խորին հաւատը։ Այն ինչ՝ գիտէի, որ այդ կուռքը ոչինչով մեղաւոր չէ իւր մոլեռանդ երկրպագուի առջև։ Նա գուցէ չէր էլ երևակայել, որ իւր պարզ, ընկերական վարմունքը կարող է մի պատանու սրտում առաջացնել այդքան հասուն, այդքան խորը և ջերմ զգացում..

Սակայն Լեոնն աւելի մեծահոգի և վեհանձն էր, քան կարող էի երևակայել։ Նրա կեղեքուող կրծքից դառն հեծկլտանքի հետ

դուրս էին գալիս միայն այս բառերը.

«Լուիզան պակասութիւն չունի... Լուիզան հրեշտակ է»...

Եղել են մոլեռանդներ, որոնք կրակի միջից իրանց այրուող ձեռները պարզել են դէպի վեր, աղօթել Աստծուն, Որի անունով նրանք դատապարտուել են այրման։ Այսպէս էր և՝ Լեոնը։ Անհուն տանջանքների բովին նա դեռ պաշտում էր իւր իդէալին, որովհետև դա նրա միակ աստուածուհին էր։

Նա զսպեց հեծկլտանքը, սրբեց արցունքը, ոտքի կանգնեց, գդակը վերցնելով։

—Հպէտք է շնորհաւորել սինեօրա Ստեֆանիային,—ասաց։—Բայց այժմ ուշ է... վաղը... Ներողութիւն, սինեօր, Լուիզայի համար չէի լալիս... Յոգնած եմ... Գիտէք... գիտէք... Լուիզան դուր է ամուսնու հետ գնում Պարիզ... Պավալլարօն գնում է իւր ձայնն աւելի մշակելու... Լուիզան իւր ապագան կը զոհի նրան... Բայց ի՞նձ ինչ... ի՞նձ ինչ...

Քանի մի բոպէ նրան պաշարեց անձնասիրութեան և ամօթի զգացումը։ Նա չփոթուեց իւր թուլութիւնից, արտասուքից։ Չփոթուեց այնպէս, որ երեսիս չէր ուզում նայել։ Վերցրեց մի քանի անգամ մանդոլինան աննըպատակ, յետ դրեց, գլխարկը ձեռքին սկսեց վազտուել նրան, ծիծաղեց, կեղծ, անբնական ծիծաղով։ Վերջապէս, ճանկեց իւր թանձր մաղերը, կանգնեց սեղանի մօտ և կարմրած

աչքերը յառեց լամպարի լոյսին։ Չգիտեմ ինչու, միշտ նրա աչքերը ձգում էին դէպի լոյս։ Նա սիրում էր նայել արեգակի շողերին, լամպարի լոյսին, վառարանի կրակին... Եւ այդ լինում էր մանաւանդ այն միջոցներին, երբ նրա մտքերը պղտորուած էին, նրա հոգին խռովուած...

Ես տանջւում էի իմ անզօրութիւնից, որովհետև չգիտէի ինչով մխիթարել մարմնացած տանջանքը։

Լռութիւնը տեւեց երկար։ Ես անցուդարձ էի անում. նա շարունակ կանգնած էր։ Ցանկարծ, շրթունքները կրծելով, գլխարկը մի ձեռով խփեց միւս ձեռի ափին, շուռ եկաւ և, առանց ինձ հրաժեշտ տալու, արագ քայլերով դուրս գնաց...

Մանդօլինան մնաց սեղանիս վրայ, կարծես, վշտացած, որ դարձեալ իրան մոռացան... Չէ՞ որ Լեոնը եկել էր նրան տանելու, որ վաղը նուագէ շոգենաւի վրայ...

Ինձ պաշարեց զղջման զգացումը. ինչու՞ այդպէս շուտ և անզգոյշ յայտնեցի նրան լուրը։ Ով գիտէ, ուր վազեց և ինչ կարող է անել։ Երկու անգամ բարձրացայ վերև և, դրսից լսելով նրա ձայնը, հանգստացայ, յետ եկայ։ Սկսեցի ինձ մխիթարել այն մտքով, որ կատարել եմ անկեղծ բարեկամի պարտք, բանալով Լեոնի աչքերը։ Մտածեցի նաև, որ, էհ, ինչ և լինի, տասնութ տարեկան պատանի է, հազիւ թէ վիշտը նրա սրտում երկար տարի։ Լաց կըլինի, լաց կըլինի Լեոնը՝ կըհանգստա-

նայ... Մտածում էի այսպէս և, մի և նոյն ժամանակ, զգում, որ սխալուած եմ...

Առաւօտը զարթնեցի մի անսովոր ծանրութիւն սրտիս վրայ։ Զտապով խմելով մի բաժակ թէյ, գնացի վերև։ Լեոնը տանը չէր։ Ալմաստն ասաց, թէ գիշերը, անկողին պառկելուց առաջ, տուել է իրան յիսուն ռուբլի և համբուրուել հետը, թէ գրեթէ ամբողջ գիշեր նստած է եղել գրասեղանի քով, գրել է, ջնջել, պատռել։ Առաւօտը կրկին համբուրուել է նրա հետ և դուրս գնացել, տանը թողնելով կիթառը, որ ամեն օր հետը տանում էր։

—Նա տխուր էր,—հարցրի ես։

—Ոչ տխուր, ոչ ուրախ. այնպէս էր, ինչպէս միշտ։

Կիթառը տանն է, մանդօլինան սենեակումս. պարզ է, որ նա ոչ պանդոկ է գնացել, ոչ շոգենաւ։ Ո՞ւր կարող է լինել։ Ես փափագեցի տեսնել նրան անպատճառ, հէնց նոյն ժամին. ես սաստիկ անհանգիստ էի։ Դուրս եկայ, պտտեցի թատրոնների շուրջը, անցայ երկու անգամ Դերիբասեան փողոցը, ուր երբեմն Լեոնը զբօսնում էր։ Չկար։ Օրը կիրակի էր. մտածեցի, գուցէ հայոց եկեղեցումն է. կիրակի օրերը երբեմն գնում էր պատարագ լսելու։ Այնտեղ էլ չէր։

Աւելի քան երկու ժամ թափառելուց յետոյ վերադարձայ տուն մտամոլոր։ Թւում էր ինձ, որ մի բան եմ կորցնում, մի շատ թան-

կագին բան։

Դարբասի առջև հանդիպեցի Զաուշէնկօին։ Նա Լեոնի սենեակից էր գալիս։ Նա էլ էր փնտռում ընկերոջը, չգիտեմ, ինչ-որ «կարևոր» գործի համար։ Եղել էր պանդոկներում, «Խերսօն» շոգենաւի վրայ, հարցրել էր. նաւաստիները այսօր նրան չեն տեսել։

Պատմեցի նրան պատահածը։

—Օ՜, ունայնութիւն, — գոչեց բանաստեղծն իւր սովորական ոգևորութեամբ.—ես միշտ ասել եմ, թէ սէրը դէպի կինը հոգու հիւանդութիւն է։ Լեոնը վաղուց է ինձ խոստովանել, թէ սիրահարուած է այդ աղջկայ վրայ։ Օ՜հ, ի՜նչքան էր խօսում նրա մասին, ի՜նչպէս հառաչում... Պէտք է գտնել նրան, հէնց իսկոյն... Նա տաքարիւն է...

Խնդրեցի նրան մի քանի բոպէ սպասել ինձ դրսում։ Գնացի սինեօրա Ստեֆանիայի մօտ։ Անշուշտ Լեոնն այսօր եղել է նրա մօտ. չէ՞ որ ուզում էր շնորհաւորել նրան։

Երջանիկ տրամադրութեան մէջ գտայ Ստեֆանիային։ Նա ուրախութիւնից երգում էր ու պարում Ռախսայի մօտ այն բոպէին, երբ մտայ սեղանատուն։ Նա ասաց, թէ հրաւիրել է մի քանի բարեկամներ ու ծանօթներ, թէ պէտք է մի լաւ զուարճանալ։

—Ա՜խ, սինեօր, այնքան ուրախ եմ, որ ուզում եմ բոլորին գրկել ու համբուրել։

«Մի զուցէ և ինձ»,—ակամայ մտածեցի

ես, գրեթէ երկիւղով նայելով նրա սիւնեերի պէս հաստ և ուժեղ կոնքերին։

Լեոնի մասին ասաց, թէ առաւօտն եղել է իւր մօտ, շնորհաւորել է, ձեռքը համբուրել։

—Նա քաղաքավարի պատանի է, իսկ և իսկ արտիստ։ Կարծես, հայրը վարսավիր չի եղել, այլ ջենտլմէն։ Բայց ծիծաղելի էր, չէր հաւատում Լուիզայի ամուսնութեանը։ Հեռագրները տուեցի, ինքը կարդաց, մէկ էլ շնորհաւորեց, բայց այնպէս մտիկ արաւ աչքերիս խէթ-խէթ, ապշած, որ, կարծես, նոր էր տեսնում ինձ։ Յետոյ առանց դէս, առանց դէն ասաց. «Սինեօրա Ստեֆանիա, մօրս սիրեցէք, նա խեղճ կնիկ է»։ Առհասարակ շատ օտարոտի էր...

Այսքանը բաւական էր, որպէս զի իմ մէջ ծագէր վատ նախազգացում։ Դուրս գալով փողոց, Զաուշէնկօին հաղորդեցի իմ երկիւղը։ Նա առաջարկեց գնալ քաղաքային թատրոնի կողմերը։ Իցկօն այժմ պիտի այնտեղ լինի. նա կարող է գտնել Լեոնին։

Իցկօին հանդիպեցինք իւր հասակի մի յոյնի հետ սատիկ վէճի բռնուած։ Յոյնը կատաղել էր, հայհոյում էր Իցկօին, անուանելով նրան «քոսոտ ջհուդ», «սատկած առնէտ» և այլն։ Իսկ Իցկօն միայն կրկնում էր. «դու ինքդ, դու ինքդ»։

Զաուշէնկօն, սպառնալով յոյնին գաւազանով ջախջախել նրա գլուխը, ստիպեց նրան լռել։ Յայտնուեց, որ վէճը Լեոնի պատճառով

էր։ Յոյնը Լեոնի մրցակիցն էր թատրոնի վեր-
նայարկում և շուացնում էր այն երգիչներին,
որոնց նա ծափահարում էր։ Նա Իցկոի մոտ
Լեոնին հայհոյել էր. Իցկոն պաշտպանել էր
բացակայ ընկերոջը և վէճի բռնուել։

Երբ Զաուշէնկոն պատմեց ինձանից լսա-
ծը, Իցկոն, վերուվեր թռչկոտելով, գոչեց.

—Իհէ, իհէ, խեղճ Լեոն...

Նա ես գիտէր, որ Լեոնը միշտ երազում
էր Լուիզայի մասին, և պատմեց մեզ մի քանի
մանրամասներ։ Ի միջի այլոց, ասաց, թէ շատ
սիրելիս Լեոնը գնում էր «Ալէքսանդրեան
պառկ» կոչուած զբօսավայրն ու այնտեղ ծո-
վափի կողմում, մի հեռաւոր նստարանի վրայ
նստում, կիթառը ծնկների վրայ դրած, և մտիկ
անում նաւահանգստից դուրս եկող շոգենաւե-
րին։ Քանի՞ քանի անգամ Իցկոն հանդիպել է
նրան այդ դրութեան մէջ, և նա ասել է. «Իցկո,
երբ մտիկ եմ անում մի հեռացող շոգենաւի,
ինձ թւում է, որ ես էլ նրա վրայ ուրիշների
հետ գնում եմ հեռու, հեռու երկիրներ»...

—Գնանք Ալէքսանդրեան պառկ, այնտեղ
է, երևի,—առաջարկեցի ես։

Տասը րոպէում հասանք զբօսավայրը, ան-
ցանք այդ ընդարձակ այգին երկայնութեամբ
ու լայնութեամբ, նայեցինք բոլոր ծառուղի-
ները. չկար ու չկար Լեոնը...

Ես վերադարձայ տուն յոգնած և՛ ֆիզի-
կապէս և՛ հոգեպէս, թողնելով Զաուշէնկոին և

Իցկոին որոնել իրանց կորած ընկերոջը...

Վատ նախազգացումս ինձ այնքան չա-
բացրել էր, որ ես առանց որ և է պատրուակի
հրաժարուեցի մասնակցել սինեօրա Սաեֆա-
նիայի այդ օրուայ ուրախ խնճոյքին։ Ես պառ-
կած էի հագուստով անկողնակալիս վրայ և մտա-
ծում էի Լեոնի և միմիայն Լեոնի մասին։ Նրա
սիրելուը, յուսահատութեամբ լի աչքերն էի յի-
շում վերջին րոպէին և նրանց մէջ կարդում մի
վոքրիկ, բայց սքանչելի հերոսի հոգու անհուն
տուայտանքը։ Երևակայում էի նրան իւր թշուառ
հօր դրութեան մէջ. հարբած, կեղտոտ, վէր
ընկած թատրոնի դռների առջև, անցորդների
ծաղրին ու սրախօսութիւններին ենթարկուած..

Նայում էի նրա մանդոլինային, սիրտս
մորմոքւում էր։ Անշունչ գործիքը, կարծես, լե-
զու էր ստացել, ողբում էր իւր տիրոջը։ Ես
վերցրի նրան սեղանից վրայից, քաշ արի պա-
տի մի անկիւնում, որ այլ ևս աչքիս չընկնի...

Մի քանի անգամ մատներս դիպան նրա
լարերին, և նրանց թոյլ հնչիւնները յիշեցրին
ինձ այն նշանաւոր առաւօտը, երբ Լեոնն ա-
ռաջին անգամ նուագեց «Մադրիդի շրջմոլիկը»։
Թշուառ շրջմոլիկ, ո՞ւր ես դու այժմ...

Իսկ այնտեղ, հարևան սենեակում ուտում,
խմում, զուարճանում էին հրաւիրուածները։
Լսում էի Ռոսիայի ձայնն և սինեօրա Սաեֆա-
նիայի բարձրաձայն ուրախ ծիծաղը, որ ա-

ռատ-ռատ բղխում էր նրա ցայն, առողջ կրծքից... Փոքր առ փոքր նեարդերս թմրեցին. ես նիրհեցի, որովհետև գրեթէ ամբողջ գիշեր չէի քնել... Կէսքուն և կիսաբթուն դրութեան մէջ լսեցի ինչ-որ դղրդոց։ Վեր թռայ տեղիցս... դա Լեոնի մանդոլինան էր, որ ընկել էր պատից յատակի վրայ։ Նոյն րոպէին, երբ գործիքը նորից քաշ էի անում պատին, դրսից լսեցի անսովոր աղմուկ։ Զտապեցի նախասենեակ և այնտեղ հանդիպեցի սինեօրա Ստեֆանիային իւր հիւրերի հետ։ Նրանց դէմքերն արտայայտում էին զարմացում և երկիւղ։

—Ի՞նչ է պատահել, ինչ է պատահել,— հարցնում էին միմեանց։

Մեր ընակարանի մուտքի առջև կանգնած էր այրի Ալմասը և, ձեռները տարածած դէպի ներքև, գոռում էր հրդեհում այլուղի պէս։ Երկու ոստիկան և մեր գաւթապահը բարձրացնում էին սանդուղով... Լեոնին։ Նրանց ետեւից բարձրանում էին Զաուշէնկօն և Իցկօն։

Նայելով Լեոնի թրջուած հագուստին, կապտած դէմքին, ամեն ինչ հասկացայ... Մնացեալն երկու խօսքով պատմեցին Զաուշէնկօն և Իցկօն։

Լեոնին հանել էին ջրից նաւաստիները «Խերսօն» շոգենաւի տակից, որ երկու շաբաթից յետոյ պիտի տանէր նրան Իտալիա...

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7/II. 1922

ՀՀ Ազգային գրադարան
NL0356055

48224